ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇԱՐՔԵՐ. ՊԱՏՄԱԿԱՆ ՑԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ ՏԱՐԵԹՈՒԵՐՈՒՄ ՈՒ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ
(ԸՍՏ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆԻՒԹԵՐԻ)

ՑԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՐՈՒԹԵԱՆ
hmarout@yahoo.com

ՄՈՒՏՔ

Մեր նախորդ մի շարք հրապարակումներում[1] նշուել է, որ հայ հասարակութեան այսօրուայ դիմագիծը մեծապէս ձեւաւորուել է հենց Ղարաբաղեան Շարժման երկուսեւկէս տարիների ընթացքում։ Շարժումը բերեց արմատական փոփոխութիւններ հայաստանցիների՝ խորհրդային իշխանութեան եօթ տասնամեակների ընթացքում ձեւաւորուած մտածելակերպում, պատկերացումների համակարգում, ու այդպիսով՝ ամբողջութեան մէջ վերցրած, հայոց ազգային ինքնութեան մէջ։

Ուսումնասիրութեամբ փաստուում է, որ հայերի ցեղասպանութեան թեման, ի հետեւանս Ի. դարասկզբի Մեծ Եղեռնի եւ Ի. դարավերջում հայերի նոր կոտորածների ու ջարդերի, Ղարաբաղեան Շարժման տարիներին շարունակում էր մնալ հայոց պատմական եւ հաւաքական յիշողութեան կարեւորագոյն դրսեւորումը։

Շարժման պատկերագրութեան եւ, մասնաւորապէս, ցուցապաստառների դիտարկումը միաժամանակ այն համոզմունքն առաջացրեց, որ այդ յիշողութիւնը ձեւափոխման գործընթաց է ապրում. Ի. դարավերջի ճգնաժամից դուրս գալու փորձը զուգակցւում է Ի. դարասկզբի ճգնաժամի յաղթահարման համար մղուող պայքարով, որի դրսեւորումներից մէկն էլ այն է լինում, որ արդարութիւն եւ կարեկցանք հայցող գոհի խորհրդանիշը իր տեղը զիջում է մարտիկի կերպարին։ Ցառաջացել է նոր գիտակցութիւն՝ թէ ազգային նպատակների իրագործմանը կարելի է հասնել միայն պայքարի ճանապարհով[2]։

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԹԵՄԱ. ՏԱՐԵԹՈՒԵՐ ԵՒ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄՆԵՐ

Ղարաբաղեան Շարժման պատկերագրութեան եւ, մասնաւորապէս, ցուցապաստառների պատկերագրական լեզուի ստեղծման ժամանակ

յաճախակի կիրառուող մեթոդներից են պատկերագրական մէջբերումները, նշաններն ու, յատկապէս, խորհրդային ու ազգային խորհրդանիշերի օգտագործումը, այլաբանութիւնները, այսպէս կոչուած «կոնցեպտուալ արուեստի սկզբունքը» եւն.[3]: Խորհրդանիշերի գործառոյթ էին իրականացնում նաեւ որոշակի տարեթուեր եւ տեղանուններ, որոնց լոկ նշումը, թուարկումը՝ կատարելով իւրայատուկ «բանալի բառ»ի (keyword) դեր, յաճախ լիուլի բաւարար էր լինում փոխանցելու պատմական մէկ կամ մի քանի ժամանակաշրջանների առնչուող հսկայական տեղեկատուութիւն:

*

Ղարաբաղեան Շարժման մէջ ցեղասպանութեան թեման առաջին պլան եկաւ 1988 Փետրուարի հայերի սումգայիթեան ջարդերից յետոյ, որոնք միանշանակօրէն համադրուեցին 1915ի Հայոց Ցեղասպանութեան հետ: Ի թիւս այդ համադրութիւնն ուղղակիօրէն մատնանշող պատկերագրական ձեւակերպումների, յայտնուեցին ցուցապաստառներ, որոնք կազմուած էին տեղանունների ու տարեթուերի օգտագործմամբ:

Այսպէս, ցուցապաստառների վերոնշեալ սկզբունքով ստեղծուած մի խմբի մէջ իմաստային բովանդակութիւնը արտածւում է ենթատեքստից, եւ Սումգայիթ տեղանունը կամ այդտեղ կատարուած իրադարձութիւնների տարեթիւը՝ 1988, տեղադրւում է արդէն իսկ յայտնի ցեղասպանութիւնների շարքում: Այդպիսին է, օրինակ, «Տէր-Զօր - Սումգայիթ/ոճիրի համար վճիռ»[4] 1988 ապրիլքսանչորսեան ցուցապաստառը: Տէր-Զօրը Սիրիայի հիւսիսում, Եփրատի աջ ափին գտնուող Դէյր-էլ-Զօր քաղաքի անուան ձեւափոխուած տարբերակն է: Այդ շրջանի տօթակէզ անապատները երիտթուրքական կառավարութեան կողմից ընտրուեցին որպէս Արեւմտեան Հայաստանի եւ Օսմանեան Կայսրութեան այլ վայրերից տեղահանուող հայութեան մնացորդացի համակենտրոնացման հիմնական վայր: Այստեղ կենտրոնացուած հայերը մահանում էին ոչ միայն թուրք դահիճների ձեռքից, այլ նաեւ սովից ու համաճարակներից[5]: 1915-16 այստեղ ոչնչացուեց շուրջ 200.000 հայութիւն: Թուրքական իշխանութիւնների համար Միջագետքի անապատները խաղացին նոյն դերը, ինչ Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ժամանակ Մայդանէկ, Օսվենցիմ, Բուխենվալդ եւ միւս համակենտրոնացման ճամբարները գերմանական ֆաշիստների համար: Այսպիսով, միանգամայն օրինաչափ է, որ «Տէր-Զօր» անուանումը դարձաւ Մեծ Եղեռնի հոմանիշներից մէկը: Ուստի պատահական չէ, որ Ղարաբաղեան Շարժ-

ման ցուցապաստառներում, երբ անհրաժեշտ է լինում տեղանքի ձեւով նշել 1915 Մեծ Եղեռնի մասին, օգտագործւում է «Տէր-Զօր» տեղանունը։

Նկար 1

ԴԷՐ-ԶՕՐ...ՍՈՒՄԳԱՅԻԹ

Զարմանալի չէ, որ այդ նոյն օրը երեւան եկաւ այս նոյն խմբի մէկ այլ, ռուսալեզու ցուցապաստառ, որտեղ ցեղասպանութիւնների շարք ընդգրկուած էր նաեւ Բուխենվալդը՝ "Deyr-Zor Bukhenvald[6] Sumgait"[7] («Տէր-Զօր, Բուխենվալդ, Սումգայիթ») (նկ. 1) *ինչով, թերեւս, փորձ էր արւում ցուցել, որ ադրբեջանցիների կողմից Սումգայիթում իրականացուած ջարդերը հայերը դիտում են նոյն հարթութեան վրայ, ինչ թուրքերի կողմից 1915ին իրականացուած հայերի ցեղասպանութիւնը եւ գերմանական ֆաշիստների կողմից համակենտրոնացման*

ճամբարներում կազմակերպած տարբեր ազգութեան միլիոնաւոր մարդկանց ոչնչացումը։

Ցուցապաստառների այս «ցեղասպանութիւնների շարք» պայմանականօրէն առանձնացուող խումբը, թերեւս առաւել ընդգրկուն ձեւով փոխանցւում է 1989 Ապրիլի 24ի տրանսպարանտային հետեւեալ տեքստի միջոցով՝ «... 1915 ... 1988 ... Մինչեւ երբ» (նկ. 2)։ Այս բանաձեւը մինչեւ 1915ը, ինչպէս նաեւ 1915ի եւ 1988ի, այսինքն՝ Մեծ Եղեռնի եւ սումգայիթեան եղեռնի միջեւ, եւ այնուհետեւ՝ «միջանցք» է թողնում, այդպիսով արձանագրելով հայերի ցեղասպանութիւնները անցեալում եւ սպասուող՝ ապագայում։ Այդ «միջանցք»ը ժամանակային իմաստով գրեթէ ամբողջութեամբ համընկնում է նաեւ խորհրդային իշխանութեան տարիներին, որը, ինչպէս մատնացոյց են անում բազմակէտերը, նոյնպէս զուրկ չէր Շարժման տարիներին իբրեւ ցեղասպանութիւն ընկալուող երեւոյթներից։ Այդ մասին ամենատարբեր ձեւերով նշում են այս դասի միւս ցուցապաստառները։

նկար 2

«Ցեղասպանութիւնների շարք»ի գաղափարը պատկերային (համակցուած թուային հետ) առումով ընդհանրապէս փոխանցւում է երկու ձեւերով՝ ցեղասպանութեան գոհերի սխեմատիկ պատկերներով եւ քարտէզների միջոցով։ Օրինակ, Օպերայի հրապարակում գտնուող Ալեքսանդր Սպենդիարեանի արձանի պատուանդանին (որը Շարժման առա-

ջին իսկ օրերից Թատերական հրապարակի «պլակատակերտ» անձանց սիրած տեղն էր) 1988 Յունիսին ամրացուած պլակատում պատկերուած էին եաթաղանով առանձնացած երկու խումբ մարդկանց ուրուանկարներ (նկ. 3)։ Խմբերն իրենցից ներկայացնում էին թերեւս ողջ հայ բնակչութիւնը. ուրուապատկերներով կարելի է ճանաչել բոլոր տարիքի տղամարդկանց եւ կանանց, իսկ հագուստի ձեւուածքը համապատասխանում է տարեթուերին՝ «1915» եւ «1988», որոնք գրուած են խմբերի վերեւում, իսկ ներքեւում պատկերուած են համապատասխանաբար Թուրքիայի եւ Ադրբեջանական ԽՍՀի դրօշները։ Մարդկանց խմբերի վերեւում գրուած է համապատասխանաբար «1500000» եւ դրուած է հարցական նշան, իբրեւ 1915ի ցեղասպանութեան զոհերի թիւ եւ Սումգայիթում զոհուածների անյայտ թիւ։

Նկար 3

Այս պլակատին կից ամրացուած էր մէկ այլ պլակատ, որը փոխանցում էր շարունակուող ցեղասպանութիւնների նոյն գաղափարը, սակայն ի տարբերութիւն նախորդի, 1915 եւ 1988 թուերի միջեւ նշուած էր 1937 տարեթիւը (նկ. 3)։ Տարեթուերի այս նոյն եռեակով մի տրանսպարանտ արձանագրուել է Եղեռնի զոհերի յուշարձանի մերձակայքում նոյնպէս 1988ին, սակայն Ապրիլի 24ին (նկ. 4)։

1937 տարեթիւը միլիոնաւոր մարդկային կեանքեր (վերջին տուեալներով՝ 1937-38ին բռնադատուել է 1,4-1,6 մլն. մարդ, որոնցից շուրջ 700000ը գնդակահարուել են[8]) տարած ստալինեան բռնութիւնների գագաթնակէտի տարեթիւն էր եւ, այդպիսով, Խորհրդային Միութեան բոլոր ժողովուրդների (եւ ոչ միայն հայերի) մեծագոյն մարդկային կորուստների խորհրդանիշ։ Վերջին շրջանի ուսումնասիրութիւնները ցոյց

են տալիս[9], որ ըստ ՀՀ Ազգային Անվտանգության Նախարարության տուեալների, միայն 1937-38ին Հայաստանում բռնադատուել է 8104 մարդ, որոնցից գնդակահարութեան է դատապարտուել աւելի քան կէսը՝ 4530 մարդ[10]: Սակայն Խորհրդային Միութեան մասշտաբով բռնադատուած հայերի թիւը, ամենայն հաւանականութեամբ, աւելի շատ է եղել, քանզի որոշ բանաւոր տուեալների համաձայն, Հայաստանի հարեւան հանրապետութիւններում «պլանը» կատարում էին հայերի հաշուին: Միւս կողմից, ըստ Արմենակ Մանուկեանի՝ «1930-1940 թթ. ստալինեան բռնաճնշումների զոհ են դարձել Հայաստանի մօտ 18 հազար բնակիչներ: Եթէ դրան աւելացնենք վերջիններիս ընտանիքների անդամներին, ընկերներին, հարազատներին հասցուած բարոյահոգեբանական եւ այլ վնասները, ապա կարելի է պատկերացնել, թէ դա ինչպիսի աղէտ էր բաւականին փոքրաթիւ ազգաբնակչութիւն ունեցող հանրապետութեան համար»[11]:

նկար 4

1988 յունիսեան վերոնշեալ պլակատում (նկ. 3) ցեղասպանութիւնների տարեթուերը գրուած են վահանների վրայ, որոնք իրենց առջեւ պահում են գինուորական համազգեստով մարդիկ, ընդ որում, ինչպէս եւ նախորդ պլակատումն էր, այստեղ եւս հագուստը (տուեալ դէպքում՝ գլխի յարդարանքը) համապատասխանում է վահանի վրայ նշուած ժամանակաշրջանին՝ 1988 գրութեամբ վահանի ետեւում կանգնած գինուորը կրում է խորհրդային սաղաւարտ աստղով, իսկ նրա 1937 գրութեամբ վահանի ետեւում գտնուող հարեւանին կարելի է ճանաչել տանկիստի այդ ժամանակաշրջանին բնորոշ գլխարկի ձեւուածքով: 1915 գրու-

թեամբ վահանի ետեւում գլխի անորոշ յարդարանք է երեւում, որում սիրող նկարիչը, դատելով պլակատի տրամաբանութիւնից, ցանկացել էր պատկերել օսմանեան ժամանակաշրջանի զինուորական գլխարկ, սակայն նրան կա՛մ յայտնի չէր այդպիսի գլխարկի նախատիպը, կա՛մ այդ նկարելը պարզապէս չէր յաջողուել։ Բնութագրական է, որ 1988 գրութեամբ վահանին յաջորդում է մէկ այլ վահան, որի վրայ գրուած չէ որեւէ տարեթիւ, սակայն դրա ետեւում նոյնպէս խորհրդային զինուորի սաղաւարտ է երեւում։ Այդպիսով այս պլակատը իւրովի է ներկայացնում ապագայում հնարաւոր ցեղասպանութիւնների շարունակութիւնը, իսկ առանց թուականի վահանը փաստօրէն գրաֆիկօրէն իրականացնում է մեզ արդէն ծանօթ «... 1915 ... 1988 ...» տրանսպարանտային բանաձեւի վերջին բազմակէտի գործառոյթը։ Վահանների շարքի պատի դիմաց մի տղամարդ է պատկերուած, որի դէպի դիտողը շրջուած կիսադէմը արտացոլում է ցաւ եւ տխրութիւն։ Նրա մէջքին պատկերուած են մուրճ ու մանգաղ, այսինքն նկարիչը շեշտում է, որ բռնի ճնշումների ենթարկուած տխուր հայ մարդը հանդիսանում է ԽՍՀՄ օրինապահ քաղաքացի։ Այն, որ այդ մարդը հայազգի է, հասկացւում է ողջ պլակատի հենքին իրականացուած Հայաստանի եւ Ղարաբաղի քարտէզների ուրուանկարից։

Քարտէզները ոչ միայն հենք էին ծառայում, այլեւ յաճախ իրենք էին կրում հիմնական իմաստային ծանրաբեռնուածութիւնը, մասնաւորապէս, հետեւողականօրէն իրականացուող ցեղասպանութիւնների գաղափարը ներկայացնելու համար։ Օրինակ, 1988 Յունիսի սկզբին յայտնուած եւ Օպերային թատրոնի պատին երկար ժամանակ ամրացուած պլակատն իրենից ներկայացնում էր Անդրկովկասի քարտէզը՝ կից տարածքներով (նկ. 5)։ Բնութագրական է պլակատի գունային լուծումը. Հայաստանն ու Ղարաբաղը ներկուած են կարմիր գոյնով (որը արեան եւ տառապանքի գոյնն է), Ադրբեջանն ու Թուրքիան՝ սեւ, որի մռայլ գոյնը պերճախօս ձեւով բացատրւում է Թուրքիայի եւ Ադրբեջանի տարածքներում առկայ մէկական դեղին գոյնի գանգերով ու ոսկորներով ու դրանց ուղեկցող տարեթուերով՝ համապատասխանաբար «1915» եւ «1988». ընդ որում, առաւել պարզութեան համար Ադրբեջանի քարտէզում նշուած են երկու դեղին շրջանակներ՝ մեծ եւ փոքր, որոնք, դատելով նրանց տեղադրումից, մատնանշում են մայրաքաղաք Բաքուն եւ մօտակայքում գտնուող Սումգայիթը։ Ռուսաստանն ու Վրաստանը ներկուած են չէզոք գորշ գոյնով։ Է՛լ աւելի չէզոք՝ սպիտակ գոյնով է ներկուած Իրանի տարածքը։ Նախիջեւանի Ինքնավար Խորհրդային

Նկար 5

Սոցիալիստական Հանրապետութիւնն ու Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը չնայած ներկուած են «հայկական» կարմիր գոյնով, սակայն «բանտարկուած են», քանի որ նրանց տարածքները վանդակների մէջ են վերցուած, եւ յիշեցնում են բանտային ճաղեր։

Նմանատիպ մէկ այլ, 1988 աշնանային ռուսալեզու քարտէզ-պլակատում (նկ. 6) գոհերի խորհրդանիշ հանդիսացող գանգերի դերը կատարում է սպանութիւնների իրականացման գործիքը՝ կացինը, որից արիւն է ծորում։ Ցեղասպանութեան տարեթուերն այստեղ լրացուած են գոհերի քանակը նշող թուերով. Թուրքիայի տարածքի վրայ գրուած է «1915» եւ «1500000», իսկ Ադրբեջանի տարածքի վրայ յայտնւում են նոր ցեղասպանութիւնների վայրերը դրանց իրականացման տարեթուերով ու գոհերի քանակով՝ «Բաքու 1918 30.000», «Շուշի 1920 20.000», «Սումգայիթ 1988 ?», «Խոջալու 1988 ?»[12]։

*

նկար 6

Ցեղասպանութիւնների շարքի «դասական» ցուցապաստառի օրինակ է 1988 Յունիսի 15ին օգտագործուած պլակատը։ Այդ օրը գումարուած էր Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի նստաշրջանը, նուիրուած ԼՂԻՄը Հայաստանին վերամիաւորելու հարցին։ Երեւանի Բաղրամեան պողոտայում առկայ մարդկանց բազմահազար բազմութիւնը պահանջում էր ոչ միայն դրական որոշման ընդունում ԼՂԻՄի հարցի մասին, այլեւ Սումգայիթում կատարուածը որակել որպէս ցեղասպանութիւն[13]*։ Առկայ պլակատների, տրանսպարանտների, սումգայիթեան եղեռնագործութեան զոհերի մեծադիր լուսանկարների շարքում կար մի ռուսալեզու պլակատ (նկ. 7) հետեւեալ բովանդակութեամբ՝ "...* Obezglavili turki tseliy narod. Khoteli ostavit odnogo armyanina, i to ... dlya muzeya ..." *(...թուրքերը գլխատեցին ողջ ժողովուրդ. ցանկացան թողնել մէկ հայ, եւ այն էլ...թանգարանի համար...)*[14]*։ Տեքստայինից զատ, այս պլակատն ունի շարունակութիւն, որը կարծես ասուածի պատկերային եւ թուային-տեղանքային հաստատումն է եւ այդ պատճառով էլ մենք որակում ենք «դասական»՝ դիտարկուող թեմայի համար. տեքստի տակ առկայ մասը բաժանուած է երեք հատուածի, որոնցից մէկում նշուած են հայկական կոտորածների իրականացման տարեթուեր, այնուհետեւ թուրքական եաթաղան է պատկերուած ու նշուած է այդ եաթաղանի զոհ մարդկանց քանակը եւ ա՛յն բնակավայրի ռուսերէն անունը (համապատասխանաբար՝ Բաքու, Շուշի, Սումգայիթ), որտեղ իրականացուել է ցեղասպանութիւնը՝* «1895-96 500000, 1915

1500000, 1918 (Baku) 30000, 1920 (Shushi) 35000, 1988 (Sumgait) 26…?»:

Նկար 7

ՆԱԽՕՐԻՆԱԿ ՄԻ ՊԼԱԿԱՏ

Նկատենք, որ ինչպէս այս, այնպէս էլ վերը յիշուած «Ցեղասպանութիւնների շարք»ի նմանատիպ պլակատները ունեցել են իրենց նախօրինակը (կամ նախօրինակները) գուցէ հեռաւոր 1920ականներին։ Այսպէս, ԱՄՆում հրատարակուած մի պլակատ[15] (նկ. 8) ունի հետեւեալ վերնագիրը՝ "The Armenian Massacres from Sultan Abdul Hamid to Mustafa Kemal Pasha", որի տակը շարադրուած է կոտորածների տխուր «ցուցակը»՝ "1895 - 300.000 - In Turkish Armenia; 1909 - 30.000 - In Cilicia; 1915 - 1.500.000 - In Turkish Armenia, Kars, Alexandrapol; 1918 - 30.000 - In Baku; 1919 - 10.000 - In Kunjular; 1921 - 20.000 - In Hajun; 1922 - 10.000 - In Izmir»։ Ցուցակի ներքոյ պատկերուած է թուրք ոճրագործը, ում ձեռքի եաթաղանից արիւն է կաթում։ Սրան ձեռքի շարժումով կանգնեցնում է "USSR (Russia)" գրութեամբ հագուստ կրող եւ նորաստեղծ ԽՍՀՄը խորհրդանշող կինը, որն իր պաշտպանութեան տակ է վերցրել հայ որբուկին, որը կրում է "Armenia" մակագրութեամբ ցնցոտիներ։ Այս ամէնի տակը մակագրուած է՝ "A Friend at Last"։ Այս պլակատի եւ Ղարաբաղեան Շարժման տարիների համանման պլակատների միջեւ թերեւս մէկ սկզբունքային տարբերութիւն կայ միայն, այն է՝ Շարժման ցուցապաստառներում բացակայում է օտարազգի փրկարարի, ազատարարի կերպարը, նրան փոխարինելու է գալիս հայ ազատամարտիկը, զինուորը։

Այս պլակատը վստահաբար յայտնի է հայաստանեան հասարակութեանը 1965ից ի վեր՝ Արամայիս Մնացականեանի Հայ Ժողովրդի Ողբերգութիւնը Ռուս Եւ Համաշխարհային Հասարակական Մտքի Գնահատմամբ աշխատութեան տպագրութեան շնորհիւ (տպաքանակը՝ 15000)։ Այստեղ էջ 161ին նախորդող էջում տեղադրուած է յիշատակուող պլակատի վերարտադրութիւնը, եւ լուսանկարի ներքեւում մակագրուած է. «Ամերիկայում առաջադէմ գործիչների հրատարակած պլակատ, որում անգլերէն տպուած են 1895-1922 թթ. հայկական ջարդերի մասին տուեալները եւ նկար՝ ՍՍՌՄ-ը ետ է մղում թուրքական կիսալուսինն ու եաթաղանը եւ պաշտպանում բզկտուած Հայաստանին»։ Գրքի հեղինակը չի գրում, թէ ե՞րբ է հրատարակուած պլակատը կամ որտեղի՞ց է վերցուած դրա արտատպութիւնը։ Մեզ մնում է ենթադրել, որ պլակատը ծագումնաբանօրէն առնչութիւն ունի Մնացականեանի յիշատակած (էջ 64-65) մէկ այլ տեղեկագրի (գրքի) հետ՝ Թուրքական Բռնակալներ, լոյս տեսած Նիւ Եորքում, անգլերէն ու հայերէն, 1963ին։ Նման ենթադրութեան համար հենք է ծառայում այն փաստը, որ այդ

THE ARMENIAN MASSACRES
FROM SULTAN ABDUL HAMID TO
MUSTAFA KEMAL PASHA
1895 - 300,000 - In Turkish Armenia
1909 - 30,000 - In Cilicia
1915 - 1,500,000 - In Turkish Armenia, Kars, Alexandrapol
1918 - 30,000 - In Baku
1919 - 10,000 - In Kunjular
1921 - 20,000 - In Hajun
1922 - 10,000 - In Izmir
USSR
ARMENIA
A FRIEND AT LAST

նկար 8

գրքում բերուած (եւ Մնացականեանի կողմից մէջբերուած) ԺԹ.-Ի. դարերում թուրքերի կողմից պարբերաբար կազմակերպուած կոտորածների զոհերի թուաքանակների, նաեւ բնակավայրերի (տարածաշրջանների) անուանումներից եւ կոտորածների իրականացման տարեթուերից մի քանիսը նոյնութեամբ տեղ են գտել դիտարկուող պլակատում։ Խօսքը վերաբերւում է Բաքուի, Քունջուլարի, Հաճրնի եւ Զմիւռնիայի կոտորածների տարեթուերին եւ զոհերի թուերին։ Մեզ այնպէս էլ չյաջողուեց գտնել Թուրքական Բռնակալներ գիրքը, որպէսզի փորձէինք ստուգել մեր ենթադրութեան ճշմարտացի լինելը։

Ինչեւիցէ, առկայ է պլակատ, այն արտայայտում է հայութեան որոշակի պատկերացումներն իր ոչ-հեռաւոր անցեալի արիւնոտ դրուագների շուրջ։ Այն, ըստ երեւոյթին, նախօրինակ է ծառայել նման կառուցուածք ունեցող այլ պլակատների համար, ուստի եւ կարիք է զգում մանրամասն դիտարկման, ինչն էլ փորձ է արուելու ներկայացնել ստորեւ։

Պլակատում առկայ են մի շարք անճշտութիւններ, որոնց կ՝անդրադառնանք ստորեւ՝ պլակատի առանձին մասեր հատ-հատ քննարկելուց։

*

1877-78 ռուս-թուրքական պատերազմից յետոյ առաջացած «Հայկական հարց»ը յետագայ տարիներին դադարել էր Օսմանեան տէրութեան ներքին հարց լինելուց եւ վեր էր ածուել եւրոպական պետութիւնների կողմից տնտեսական ու քաղաքական նպատակներով օսմանեան կառավարութեան վրայ ճնշում գործադրելու միջոցի։ Օգտուելով Թուրքիայի հարցում մեծ տէրութիւնների միջեւ առկայ հակասութիւններից եւ ձգտելով հասնել երկրի ներքին համախմբմանը՝ այդ թւում մահմեդական մոլեռանդութեան բորբոքման միջոցով, սուլթան Աբդուլ Համիդ Բ.ը որոշում է պարտադրուող բարեկարգումների փոխարէն երկրի ներքին թշնամիների՝ հայերի զանգուածային կոտորածներ կազմակերպել։ Նկատենք, որ 1890ականների կոտորածների շարքի համար հայ պատմագրութեան մէջ օգտագործւում են 1893-97, 1895-96 եւ, առաւել ընդունուած, 1894-96 ժամանակային շրջանակները, բայց ոչ հենց միայն 1895 թիւը։ Ինչեւիցէ, որոշուեց այդ քաղաքականութեան կիրառումը սկսել Սասունից։ Այստեղ մղուող կռիւների ընթացքում, 1894 Օգոստոսից մինչեւ 1895 սպանուեցին շուրջ 10 հազար հայեր։ Թուրքական իշխանութիւնները որոշում են հայերի ջարդեր կազմակերպել ոչ միայն Արեւմտեան Հայաստանում, այլեւ Կայսրութեան գրեթէ բոլոր հայաշատ շրջաններում ու նաեւ այդ կերպ փորձել լուծել Հայկական Հարցը,

գրկել հայերին երկրում ունեցած տնտեսական հզօր լծակներից, կանգնեցնել յեղափոխական կազմակերպութիւնների գործունէութեան աշխուժացումը։ 1895 Սեպտեմբերին, օգտագործելով Կ. Պոլսում հայերի խաղաղ ցոյցի փաստը, քաղաքում կոտորուեց շուրջ 2 հազար մարդ, Հոկտեմբերից-Դեկտեմբեր կոտորածները շարունակուեցին Տրապիզոնում, Բիթլիսում, Երզնկայում, Արաբկիրում, Գիւմիւշխանէում, Կարինում, Տիգրանակերտում, Բալուում, Ակնում, Շապին-Գարահիսարում, Խարբերդում, Ուրֆայում եւ այլուր։ Պոլսի Հայոց Պատրիարք Մ. Իզմիրլեանի խօսքերով, «ամբողջ հայ ժողովուրդը սուգուում է արեան մէջ»։ Զինուած պայքարով յաղթանակի հասան զէյթունցիները, սակայն անյաջողութեամբ աւարտուեցին ինքնապաշտպանական կռիւները Վան-Վասպուրականում, Մալաթիայում, Զարսանջակում։ 1896ին կրկին կոտորուեցին Պոլսի հայերը։ 1894-96ին կոտորուածները սովորաբար հաշուում են 300 հազար մարդ (որոշ հետազօտողներ՝ 500 հազար, 200 հազար, 250 հազար), բռնի մահմեդականացուածների թիւը՝ 100 հազար։ Կոտորածներին ուղեկցեց ու յաջորդեց գանգուածային արտագաղթը՝ շուրջ 100 հազար հայեր տարագրուեցին այլ երկրներ[16]։

*

Ա. Համաշխարհային Պատերազմի նախօրեակին Կիլիկիայում կար մօտ 205 հազար հայութիւն։ Քաղաքներից ամենանշանաւորը Ադանան էր, որն ունէր 66 հազար բնակիչ, որոնցից 22 հազարը հայեր էին[17]։

1908 Յուլիսին տեղի ունեցաւ երիտթուրքական յեղաշրջումը, որը մեծ յոյսեր եւ պատրանքներ առաջացրեց Թուրքիայի բնակչութեան, այդ թւում՝ հայերի շրջանում։ Գերազանցապէս հայաբնակ Կիլիկիան, որ համեմատաբար զերծ էր մնացել 1894-96ի համիդեան կոտորածներից, ազգային կեանքի աշխուժացմամբ, հայերի նիւթական բարեկեցութեան աճի եւ առեւտրի ու արհեստագործութեան բնագաւառում հայերի գերազանցութեան շնորհիւ դեռեւս 1906-1907ին իր վրայ է գրաւում թուրքական կառավարութեան ուշադրութիւնը։ Սահմանադրութեան վերահաստատումից դժգոհ ուժերը արդէն 1908ին Ադանայում սկսեցին բորբոքել կրօնամոլ, մոլեռանդ թուրք յետադիմական տարրերին, ինչը բերում է հայկական ջարդերի սպառնալիքի աճ[18]։ Ադանայի առաջին ջարդը սկսւում է 1909 Ապրիլի 1ին, Աբդուլ Համիդ Բ.ի կողմից իշխանութիւնը վերագրաւելու (այսպէս կոչուած «յետադիմական շարժման») յաջորդ օրը։ Թուրքերը շուկայում յարձակւում են հայերի վրայ, թալանում նրանց խանութները, ապա եւ կոտորում։ Ջարդերը շարունակւում են քաղաքի հայկական թաղամասերում, որին հետեւում է դրանց հրդե-

հումը։ Առաջին կոտորածներն աւարտւում են երեք օր անց եւ բաւականին անսպասելի։ «Զինուորները՝ որ ջարդէն առաջ իրր թէ փոքրաթիւ խուժանը չէին կրցած զսպել, ջարդէն ետքը անոր տասնապատիկը աւելի եղող ահագին խուժանը զսպեցին կէս ժամուան մէջ...»[19]։ *Այս հանգամանքն էլ թոյլ է տալիս հայերին եզրակացնել, որ ամէն ինչ տեղի էր ունենում կառավարութեան գիտութեամբ*[20]։ *Ապրիլի 12ի երեկոյեան, երիտթուրքերի կողմից Կարմիր Սուլթանին գահընկեց անելու նախորդ օրը, արդէն երիտթուրքական բանակային գնդերի մասնակցութեամբ, հայկական ջարդերը վերսկսւում են։ Իր մասշտաբով* («հազարաւոր դիակներու կոյտերով լեցուած փողոցներ»[21]), *սպանդի դաժանութեամբ, աւարի ու կողոպուտի սաստկութեամբ այս երկրորդ փուլն աւելի ահաւոր ու սահմռկեցուցիչ էր։ Ադանայի կոտորածներին զուգընթաց, ջարդեր տեղի ունեցան նաեւ վիլայէթի հայաբնակ այլ վայրերում, մասնաւորապէս Տարսոնում, Մամեստիայում, Համիդիէում, Օսմանիէում, Մերսինում։ Աւերածութիւնների, թալանի ու կոտորածների ենթարկուեցին նաեւ Հասան Բէյլին, Լաթաքիան, Այասը, Այնթապը, Անտիոքը եւն.։ Տեղ-տեղ հայերը դիմում էին ինքնապաշտպանութեան, որը երբեմն պսակւում էր լիակատար յաղթանակով։ Դիմադրութիւն կազմակերպուեց ինչպէս Ադանայի մի քանի թաղերում, նոյնպէս եւ Դէօրթ-Եոլում, Շէյխ-Մուրադում, Սիսում, Հաճընում, Հասան-Բէյլիում եւ այլուր։*

Ադանայի կոտորածներն իրենց ձեւերով, իրագործման վայրենի եղանակներով, ահաւոր մեթոդներով ցնցեցին ողջ աշխարհը։ «Հարուածը՝ ծանր, արիւնը՝ յորդահոս, եղեռնը՝ քստմնելի ու տառապանքը անհանդուրժելի։ - Ահա ա՛յն վիճակը, որուն ենթարկուեցաւ Ատանա, իր շրջակայքով ...»[22]։ *Ականատեսների վկայութեամբ,* «Որոշ զոհեր ենթարկւում են մի ամբողջ շարք կտտանքների, որոնք կատարւում են յոյժ անբասիր արուեստով, որպէսզի աւելի երկարացնեն նահատակի կեանքը եւ դրանով իսկ երկարացնեն իրենց բաւականութիւնը։ Նրանց խեղում են դանդաղօրէն, չափաւոր, քաշելով եղունգները, կոտրելով նրանց մատները, շիկացած երկաթով դաջելով նրանց մարմինները, գանգից քերթում են նրանց գլխամաշկը, ի վերջոյ նրանց վերածում են խիւսի, որ նետում են շներին ի կեր։ Ոմանց ոսկորներն են մի քիչ կոտրում, ոմանց խաչում են կամ վառում որպէս ջահ։ Զոհի շուրջը հաւաքւում է ամբոխը, որը զուարճանում է՝ նայելով այդ տեսարանին եւ ծափահարում խոշտանգուողի ամէն մի շարժման հետ»[23]։

Կիլիկեհայութեան մարդկային կորուստները, ըստ տարբեր աղբիւրների, եղել են աւելի քան 20 հազար, շուրջ 30 հազար, կամ 35 հազարից աւելի[24]։ Ցակոբ Թերզեանը, վկայակոչելով «Կիլիկիոյ աղէտին մէջ զոհուածներու» Ազգային Քննիչ Մասնախմբի հաշուումները, բերում է 18839 թիւը[25]։ Եթէ սրան գումարուում են Կիլիկիայի թուրքաբնակ գիւղերում կոտորուած շուրջ 10300 հայազգի արտագնաց մշակները, ապա «անվերապահօրէն պիտի համաձայնուել այն եզրակացութեան հետ, որ Կիլիկիայում 1909 թ. թուրքական ոճրագործների կողմից կոտորուել է շուրջ 30 հազար հայ»[26]։ Կիլիկիայի հայերի կոտորածները համիդեան եւ երիտթուրքական կառավարութիւնների կողմից որոշակիօրէն մշակուած հայաջինջ ծրագրի կոնկրէտ իրագործումն էին, հայոց Մեծ Եղեռնի նախերգանքը[27]։

*

Ըստ ցուցապաստառի տրամաբանութեան, ստացւում է, որ 1915ին հայերի կոտորածներ են եղել նաեւ Կարսում ու Ալեքսանդրապոլում։ Իրականում այս քաղաքներում ու նրանց շրջակայքում կոտորածներ եղել են 1918ին եւ 1920ին։ Անդրադառնանք փաստերին։

1917ի Հոկտեմբերեան Յեղափոխութիւնից յետոյ, Արեւմտեան Հայաստանի տարածքում գտնուող ռուսական բանակի մեծագոյն մասը վերադարձաւ հայրենիք։ Նրանց փաստօրէն փոխարինեցին 1918 Յունուարին ձեւաւորուած, սակայն դեռ ոչ լրիւ համալրուած, հանդերձաւորուած եւ զինուած լոկ հայկական առանձին բանակային կորպուսի զօրամասերը։ Ռազմաճակատի մի շարք հատուածներում մէկ գնդին որպէս պաշտպանութեան բնագիծ տրուած էր մօտ 300 կմ. ճակատ։ Այդպիսի անբարենպաստ պայմանները թուրքերն օգտագործեցին իրենց պանիսլամական եւ պանթուրքական ծրագրերի իրականացման համար։ 1918 Փետրուարի 10ին, խախտելով Երզնկայի զինադադարը, թուրքական զօրքերն անցան յարձակման եւ ամսուայ վերջին գրաւեցին Էրզրումը, իսկ Ապրիլի 10ին՝ Սարիղամիշը։ Հայկական զօրքերի բարոյական թուլութեանը եւ կանխորոշուած նահանջելու անկումային տրամադրութիւններին նպաստում էր նաեւ Անդրկովկասեան Կոմիսարիատի, ապա եւ Սէյմի դաւաճանական քաղաքականութիւնը։ Արդիւնքում Կարսը Ապրիլի 26ին, առանց լուրջ դիմադրութեան, յանձնւում է թուրքերին[28]։ Կարսի ու շրջակայքի ամբողջ քրիստոնեայ ազգաբնակչութիւնը (188 հազար մարդ), որը հիմնականում բաղկացած էր հայերից, վախենալով նոր ջարդից, զօրքերի հետ միասին թողնում է քաղաքը[29]։ Ա. Ցարութիւնեանի համաձայն, «Կարսում թուրքերը պահել էին հայ

սպաներին, զինուորներին ու մի քանի հազար այլ մարդ եւ բոլորին ոչնչացրել»[30]։ *Կարսի անկումով Ալեքսանդրապոլի պաշտպանութեան հարցը շատ էր բարդացել։ Հայկական զօրքերի ղեկավարներն այն սխալ մտայնութիւնն ունէին, թէ թուրքերը Արփաչայը չէին անցնի։ Արդիւնքում՝ կարգին պաշտպանութիւն չկազմակերպուեց եւ Մայիսի 15ին, անսպասելի յարձակմամբ, թուրքական զօրքերը գրաւեցին Ալեքսանդրապոլը, ապա եւ շրջակայքի գիւղերը։ Փաստաթղթերից մէկում վկայուած է, որ գաւառի Մեծ Ղարաքիլիսա գիւղի* «ձորերում եւ անտառներում սրածութեան եւ գնդակահարութեան են ենթարկուել մօտ 20 հազար տղամարդ ...։ Առհասարակ, Ալեքսանդրապոլի շրջանի 120ից աւելի հայաբնակ գիւղերից ... եւ ոչ մէկը զերծ չի մնացել տաճկական աւերիչ ու կործանիչ սրից ու եաթաղանից։ ... Երկիրը լի է այրիներով, անհայր ու անմայր քաղցած որբերով»[31]։ *Մէկ այլ փաստաթղթում նշւում է, որ Ալեքսանդրապոլի գաւառում* «թուրքական կանոնաւոր զօրամասերը, իրենց դաշնակիցների՝ մուսուլմանական հրոսակների հետ, անասելի վայրագութիւններ կատարեցին. կանանց բռնաբարում ու երեխաների պղծում, տղամարդկանց մեթոդաբար զանգուածային բնաջնջում .... միմեանց կապկպած հարիւրաւոր խաղաղ բնակիչների գնդակահարութիւն, սարսափներ, որոնք անհնար է նկարագրել։ ... Ջրհորները, փոսերը, ձորերը, գետերն առ այսօր էլ լի են սպանուածների նեխած դիակներով։ Ալեքսանդրապոլի գաւառի տեղերում մնացած բնակչութիւնից, որը չէր հասցրել փախչել, աւելի քան 10 հազար երիտասարդներ քշուեցին Թուրքահայաստանի խորքը՝ դէպի Էրզրում, որտեղ նրանք զոհուեցին ասկեարների գնդակներից, սովից, ցրտից ու հիւանդութիւններից ...»[32]։

1920 *Մեպտեմբերին քեմալական Թուրքիայի արեւելեան զօրաբանակը, զգալիօրէն ուժեղացած Ռուսաստանի տրամադրած մեծ քանակութեամբ զէնք ու զինամթերքով, պատերազմ սկսեց Հայաստանի Հանրապետութեան դէմ, խնդիր ունենալով ոչ միայն ոչնչացնել երկրի պետականութիւնը, այլեւ իրագործել արեւելահայութեան ցեղասպանութիւնը։ Թուրքական աւելի քան 50 հազարանոց զինուժի դէմ կանգնած 35-40 հազարանոց հայկական բանակն*[33] *այդ ժամանակ ոչ-մարտունակ էր, բարոյալքուած, դասալքութեամբ թուլացած, ինչում որոշակի դեր ունէր նաեւ հայ բոլշեւիկների քարոզչութիւնը, որը Քեմալական Շարժումը համարում էր «ազատագրական», իսկ թուրքերին ներկայացնում էր որպէս* «բոլշեւիկների դաշնակիցներ, սովետական իշխանութեան կողմնակիցներ», *որոնք պայքարում են ոչ թէ հայ ժողովրդի, այլ Ան-*

տանտի հաւատարիմ գործակալների՝ դաշնակ պարագլուխների դէմ[34]։ Այս սխալ քարոզչութեան հետեւանքով Ալեքսանդրապոլի գաւառի գիւղացիները աղ ու հացով էին դիմաւորում թուրք ասկեարներին[35]։ Որպէս բոլշեւիկներ էին ներկայանում նաեւ թուրքերը[36]։ Անտանտի երկրները մերժեցին որեւէ օգնութիւն ցուցաբերելու Հայաստանի խնդրանքը[37]։ Գրաւելով Սարիղամիշն ու Կաղզուանը, Հոկտեմբերի 30ին թուրքերը՝ առանց լուրջ դիմադրութեան հանդիպելու, մտան Կարս, Նոյեմբերի 7ին՝ Ալեքսանդրապոլ։

Կարսում, ականատեսների վկայութեամբ, թուրքերը երեք օր շարունակ սպանում էին բացառապէս հայերի. բազմաթիւ հայուհիներ իրենց նետում էին Կարս գետը թուրքերի ձեռքը չընկնելու համար. թալանուել էին հայերի խանութները, տները, գոյքը։ Քաղաքում ընդհանուր առմամբ կոտորուել է շուրջ 10-12 հազար մարդ (այլ տուեալներով՝ 4 հազար)։ Կալանաւորուած հայ տղամարդկանց՝ շուրջ 3 հազար հոգի, ամբողջովին մերկացնելուց յետոյ, մի մասին ուղարկել են Սարիղամիշ, միւսին՝ Էրզրում, պարտադիր աշխատանքների. յետագայում ստացուած տուեալների համաձայն, նրանց մեծ մասը զոհուել էր։ Ալեքսանդրապոլում եւ գաւառի գիւղերում[38] (որտեղից թուրքերը հեռացան միայն 1921 Ապրիլին) համաձայն քաղաքի Ցեղկոմի Ցատուկ Ցանձնաժողովի հետազօտութեան, հայերի զոհերը կազմել են շուրջ 60 հազար մարդ, եւս շուրջ 25 հազարը մահացել են սովից, վիրաւորների թիւը կազմել է շուրջ 40 հազար, աւելի քան 20 հազար հոգի քշուել է գերութեան։ Ալեքսանդրապոլից մինչեւ Նալբանդ կայարանը ընկած հատուածում ոչնչացուել է 140 հայկական գիւղ, գլխովին սրի են քաշուել 18-45 տարեկան բոլոր տղամարդիկ[39]։ Այլ տուեալներով, 1920-21ին Արեւելեան Հայաստանում թուրքերը ոչնչացրել են շուրջ 198 հազար հայ[40]։

*

Ցուցապաստառում անգլերէնով նշուած է Կունջուլար բնակավայրը, ուր 1919ին տեղ գտած կոտորածներին, ըստ պլակատի, զոհ են գնացել շուրջ 10 հազար հայեր։ Նման անուամբ բնակավայր մեզ յայտնի չէ։ Սակայն, եթէ առաջնորդուենք այն ենթադրութեամբ, որ Թուրքական Բռնակալներ գրքի Քրնջիվլարը նոյն Կունջուլարն է, ապա կ՚ունենանք գոնէ դիտարկուող բնակավայրի հայերէն համարժէքը։ Հնչողութեամբ սրան բաւականին մօտիկ է (թուրքերէնում «ու»ն եւ «ր»ն յաճախ գրեթէ նոյն ձեւով են հնչում) Մարմարա ծովի ափին տարածուած Նիկոմիդիայի կամ Իզմիթի գաւառի Գրնճրլար[41] (անունն աստիճանաբար է ձեւա-

փոխուել՝ Կրնճրլու, Գանճալար, Խանճալար, Խրնճրլար։ Անուանումը համարւում է աղաւաղում «Գանճաճրլար» ձեւի) հայաբնակ բնակավայրը, որի գլխաւոր հիմնադիրներն են համարւում 1577ին Կարնոյ Դանիկ գիւղից, ապա եւ Ակնից ներգաղթածները։ Բնակավայրը մաս է կազմում Կէյվէյի գաւառակին (կազա)։ 1909-10ին բնակչութեան թիւը կազմել է 2665 մարդ, ունեցել է 450 տուն (որից աւելի քան 410ը՝ առաքելական դաւանանքի, 15-20ը՝ բողոքական), երկսեռ դպրոց 200 աշակերտներով, զբաղուել են խաղողագործութեամբ եւ շերամապահութեամբ (գիւղում գործել է մետաքսի երկու մանարան 200 աշխատողներով), համարուել է շրջանի «ամէնէն յառաջադէմ գիւղն կրթական ու զարգացական եւ մասամբ տնտեսական տեսակէտէ. բնակչութեան աճման հետեւանքով բնակիչներու տեղափոխութիւններ անպակաս են»[42]։ Գաւառի գիւղերի միջից Գրնճրլարն ամէնից շատ հարկեր վճարողն է եղել։ Այսպիսին էր իրավիճակը Առաջին Համաշխարհային Պատերազմի նախօրէին։ Ինչեւիցէ, գիւղի բնակչութեան թիւը երբեք էլ 10 հազարի չի հասել։ Կարող ենք, սակայն, առաջնորդուել այն ենթադրութեամբ, որ պլակատի հեղինակը նկատի է ունեցել Կէյվէյի շրջանի ողջ հայութեանն ընդհանրապէս, քանի որ միւս ամենահին գիւղը Գրնճրլարից կէս ժամ հեռաւորութեան վրայ գտնուող Գուրտպէլէնն (Գայլաբլուր) է 780 տնով եւ 3900 մարդով[43], իսկ երրորդ եւ ամենամեծ գիւղը՝ Միջագիւղը (Օրթաքէօյ), որն ունեցել է 8-900 տուն հայութիւն, որից 200ը առաքելական էին, մնացածը՝ կաթոլիկներ։ Ամբողջութեան մէջ Առաջին Համաշխարհային Պատերազմի նախօրեակին Կէյվէյի գաւառակի հայութեան թիւը 8730 մարդ էր[44]։

Բնակավայրին անդրադարձ է կատարուած նաեւ յետեղեռնեան տարիներին։ Նրա մասին նշւում է. «... 500 տնուոր (3000 անձ) զուտ հայաբնակ գիւղ՝ հիմա քարուքանդ։ ...Ժողովուրդն իր քահանաներուն հետ, 21 Յուլիս 1915ին, Կիրակի օր, մէկ անգամէն դէպի Բաքքա եւ Տէր Զօր աքսորուած։ Վերադարձող հազիւ քանի մը տասնեակ հոգի, իսկ բնակելի տուն՝ 5 հատ միայն մնացած։ Եկեղեցին Ս. Սարգիս (նոյնպէս քանդաւեր)...»[45]։ Ս. Մոցիկեանը նոյնպէս նշում է 1915ը որպէս ժամանակ, երբ Նիկոմիդիայի գաւառի հայաբնակ գիւղերը «իրենց շինարար եւ յառաջադէմ Հայ բնակիչներէն զրկուեցան եւ ամայի ու աւերակ վիճակի մը մատնուեցան..., եւ որոնք, ներկայիս, կը պարունակեն շատ աննշան թուով Հայեր միայն, աքսորավայրերէն վերադարձած, խեղճուկրակ վիճակով, ամէն իրաւունք կորսնցուցած»[46]։

Ստեփան Պօղոսեանը նշում է, որ 1919ի աշնանը, երբ յոյների պարտութիւնից յետոյ թուրքերի հետ կնքուեց Մուդանիայի պայմանագիրը

եւ յունական զօրքերը հեռացան Զմիւռնիայից, Նիկոմիդիայից, Արեւելեան Թրակիայից, իսկ դաշնակիցները՝ Կ. Պոլսից, Նիկոմիդիայում տեղի ունեցան բախումներ հայերի ու թուրքական բանակի եւ բնակչութեան միջեւ. «Սակայն, ի վերջոյ, այս շրջանի հայերը նոյնպէս հարկադրուած եղան հեռանալ հայրենի վայրերից. նրանց զգալի մասը ոչնչացուեց թուրքական բանակի կողմից Մուդանիայի ճանապարհին»[47]: Գուցէ ա՛յս իրողութիւնները նկատի ունի պլակատի հեղինակը, երբ գրում է, որ Կունջուլարից կոտորուել են 10 հազար մարդ:

*

Այն փաստը, որ խորհրդային իշխանութեան տարիներին ազգային-ազատագրական պայքարի, ֆիդայական կռիւների հերոսների թեմայի ազատ արծարծումը գաղափարախօսական առումով շարունակում էր մնալ չյայտարարուած արգելանք, դրսեւորուեց նաեւ Ղարաբաղեան շարժման տարիներին, երբ, թերեւս նաեւ սումգայիթեան ողբերգութեան ազդեցութեան ներքոյ, եղեռնի թեման շօշափելուց խօսւում էր գերազանցապէս հայկական կողմի մարդկային կորուստների մասին միայն: Մասնաւորապէս, երկրորդական պլան էր մղուել 1894-1920ին տեղ գտած հերոսական ինքնապաշտպանութիւնների թեման:

Այդպէս է եւ դիտարկուող ցուցապաստառում յիշատակուած Հաճընի պարագայում:

Հաճընը Լեռնային Կիլիկիայի հինաւուրց քաղաքներից է, ԺԲ.-ԺԴ. դդ. եղել է Կիլիկիայի Հայկական Պետութեան կազմում: Առաջին համաշխարհային պատերազմից առաջ քաղաքն, ըստ տարբեր հեղինակների, ունէր 25-35000 հայազգի բնակչութիւն, որոնք 1915ին աքսորուեցին Դէր-Զօրի անապատները, ուր նրանց մեծ մասը ոչնչացաւ: Պատերազմի աւարտից յետոյ, հաւատալով դաշնակիցների ու, մասնաւորապէս, Կիլիկիայում ֆրանսիական գրաւող զօրքերի հրամանատարութեան հայերի կեանքի ապահովութեան մասին խոստումներին, շուրջ 6-8000 հայեր վերադարձան Հաճընի: Սակայն աւերուած քաղաքի վերաշինումը կարճ է տեւում, քանի որ տեղեկութիւն է ստացւում, որ քեմալականները 1920ի սկզբներին յարձակում են նախապատրաստում Հաճընի վրայ: Հաճընցիները որոշում են պաշտպանել իրենց քաղաքը՝ յոյս ունենալով օժանդակութիւն ստանալ ֆրանսիական իշխանութիւններից: Ստեղծւում է ինքնապաշտպանութեան Խորհուրդ, զօրավար Անդրանիկի գինակից Սարգիս Ճեպէճեանի գինուորական ընդհանուր հրամանատարութեամբ, զօրակոչի են ենթարկւում 16-50 տարեկան բոլոր տղամարդիկ, ձեւաւորւում են չորս վաշտեր, առաջապահ եւ պահեստի խմբեր: 1920

Ապրիլի 1ից սկսւում է քեմալական զօրքի յարձակումը։ Հաճընցիների հերոսական ինքնապաշտպանութիւնը տեւում է ամբողջ 8 ամիս՝ մինչեւ Հոկտեմբերի 15ը։ Այդ ընթացքում հայերը մի քանի անգամ ետ են շպրտում թուրքական գերազանցող ուժերին, գրաւում են մեծ քանակութեամբ զէնք ու զինամթերք, պարէն, սակայն ուժերն անհաւասար էին։ Հոկտեմբերի 15ին աւելի քան 15 հազարանոց թուրքական զօրքին յաջողւում է ճեղքել մի քանի հարիւր հոգուց բաղկացած հայկական հրացանակիր վաշտերի պաշտպանութիւնը, ներխուժել քաղաք եւ գազանաբար ոչնչացնել նրա բնակչութեանը՝ շուրջ 6 հազար մարդու (որոշ տուեալներով՝ 8 հազար զոհ, այլ տուեալներով՝ շուրջ 9600 սպանուած կամ գերի տարուած[48], բայց ոչ՝ 20 հազար, ինչպէս նշուած է ցուցապաստառում)։ Միայն մօտ 400 հոգուց բաղկացած մի ջոկատի է յաջողւում ճեղքել թուրքերի պաշարման գիծը եւ փրկուել[49]։

*

Եգէական Ծովի ափին գտնուող վաճառաշահ Զմիւռնիա քաղաքում հայերը բնակւում էին ԺԴ. դարի վերջին քառորդից[50]։ Քաղաքի բնակչութիւնը 1922ին հասնում էր գրեթէ կէս միլիոնի։ Բնակիչների մեծ մասը յոյներ էին, ապա թուրքեր, հրեաներ, հայեր եւն.։ Հայերի թիւը հասնում էր 25 հազարի[51] (քաղաքի մերձակայ շրջանների հետ միասին՝ 30 հազարի)։ Հայերը գերազանցապէս բնակւում էին հայկական թաղամասում՝ Հայնոցում, որն ունէր երկու կիլոմետր երկարութիւն։ Այստեղ էին տեղաւորուած հայկական հոգեւոր-կրթական հաստատութիւնները՝ չորս եկեղեցիները, դպրոցները, գրադարանը, ծերանոցը, թանգարանը, տպարանները։ Հայերը նշանակալի դեր ունէին քաղաքի եւ վիլայէթի ոչ միայն մշակութային, այլ նաեւ տնտեսական կեանքում։ Մասնաւորապէս, հայերի ձեռքին էր քաղաքի վաճառականութեան եւ արհեստների գլխաւոր մի մասը։ Նրանք յաջողութեամբ զբաղւում էին գորգագործութեամբ ու գորգի վաճառքով, նաեւ այգեգործութեամբ, պտղամշակութեամբ։

Արեւմտահայութեան ընդհանուր տեղահանութեան ժամանակ՝ 1915ին, Զմիւռնիայի հայերը, շնորհիւ քաղաքի աշխարհագրական դիրքի՝ Եւրոպայի հետ անմիջական շփումների, չտարագրուեցին։ Դեռ աւելին, պատերազմի տարիներին այստեղ ապաստան գտան Թուրքիայի միւս շրջաններում ջարդից փրկուած հայեր[52]։

1919 Մայիսին սկսուեց թուրք-յունական պատերազմը, որը փոխնիփոխ յաջողութիւններով շարունակուեց մինչեւ 1922։ Ի վերջոյ, նաեւ շնորհիւ Ռուսաստանի ռազմա-քաղաքական աջակցութեան եւ եւրոպա-

կան տէրութիւնների անուղղակի օժանդակութեան, թուրքերին յաջողուեց յունական զօրքերին պարտութեան մատնել Անկարայի մատոյցներում եւ հասնել մինչեւ Եգէականի ափերը։ Սեպտեմբերի 9ին թուրքական զօրքերը մտան Զմիւռնիա։ Կանոնաւոր բանակի զօրամասերը երեք օր շարունակ դաժան հաշուեյարդար տեսան քաղաքի յոյն եւ հայ բնակչութեան հետ։ Զմիւռնիայում ԱՄՆ հիւպատոսի վկայութեամբ, Մուստաֆա Քեմալը «սկսել է հայերի նոր հալածանք, կանանց ու երեխաներին լցնել էր տալիս երկաթուղային վագոններն ու ապա հրամայում նրանց վրայ ածուխ լցնել ու վառել...Անշուշտ Քեմալի նպատակը ոչնչացումն էր»[53]։ Ականատեսների հաղորդումներով, հայկական թաղամասի փողոցները լցուած էին կանանց ու տղամարդկանց դիակներով այնպէս, որ անցնել անգամ չէր լինում[54]։ Ֆրանսիացի Ռընէ Պյուօն պատմում է, որ «Սեպտեմբեր 9էն ի վեր դիակները փողոցներուն մէջ նետուած եւ գարշահոտութիւն տարածած էին ամէնուրեք, թուրքերը ամէն բան կողոպտելէ եւ Հայոց թաղի բնակչութեան բաւականին մէկ մասը ջարդելէ յետոյ, բոլորը անհետացնելու համար դիմած էին կրակի օգնութեան»[55]։ Մոցիկեանի բնութագրմամբ, «Հրդեհը մէկ կողմէ, կոտորածը միւս կողմէ, Զմիւռնիոյ մէջ Հայութեան բնաջնջումի ահազանգը հնչեցուցին։ Վերջին դատաստանի օր մըն էր կարծես, վրայ հասած»[56]։ Հայերի եւ յոյների ջարդերը շարունակուեցին եւրոպական մարտանաւերի անձնակազմերի աչքի առաջ, նաւահանգստում։ Շատ նաւեր հրաժարւում էին հայերին ընդունել։ Թուրքերը ծակել էին ափին գտնուող նաւակների յատակները, այնպէս որ փախչել փորձողների նաւակները՝ ափից քիչ հեռանալուց յետոյ, շրջւում էին։ Թուրքերը ջրասոյզ արեցին նաեւ փախստականներ տեղափոխող մի քանի նաւեր, բնակչութեան մի մասին էլ քշեցին Թուրքիայի խորքերը եւ հիմնականում ոչնչացրին[57]։ Քաղաքի բնակչութեան որոշ մասին յունական կառավարութիւնը նաւերով տեղափոխեց Յունաստան։

Մօտաւոր տուեալներով, Զմիւռնիայի կոտորածներին զոհ գնաց շուրջ 100 հազար յոյն եւ հայ բնակչութիւն[58]։ Ինչպէս նկատում է ժամանակակիցը, Զմիւռնիայի աղէտով վերջացաւ արեւմտահայութեան հաշուեյարդարը[59]։

*

Արդ, փորձենք անել որոշ եզրակացութիւններ։

Ա.- Պլակատի ստեղծման ժամանակը այնքան էլ պարզ չէ։ Բոլոր դէպքերում, այստեղ տեղ գտած տարեթուերը, տարածաշրջանների ու բնակավայրերի անուանումներն, ինչպէս եւ զոհերի քանակն ուղղակի

աղերսներ ունեն 1963ին ԱՄՆում հրատարակուած Թուրքական Բռնակալներ գրքի էջ 12-13ում տեղակայուած թուրքական կոտորածների ցուցակ-տեղեկագրի հետ։ Մեզ հասանելի չեղաւ այս աշխատութիւնը, ուստի չենք կարող յստակօրէն պնդել, թէ այդ ցուցակ-տեղեկագիրը ե՞ւս ստեղծուած է 1960ականներին, թէ՞ մէջբերուած է աւելի վաղ լոյս տեսած աշխատութիւնից։ Ցուցակ-տեղեկագրում առկայ անճշտութիւնները նոյնութեամբ մուտք են գործել պլակատ։ Իր հերթին, պլակատում առկայ են «սեփական» սխալներ։

Բ.- Պլակատի հեղինակները նկատուած են իբրեւ «առաջադէմ գործիչներ»։ Խորհրդային տարիներին այդպէս էին որակւում հակախորհրդային ուղղուածութիւն չունեցող հասարակական-քաղաքական ուժերը։ Դատելով պլակատի բովանդակութիւնից, ներկայ պարագայում դրանք հայկական սփիւռքը ներկայացնող գործիչներ են։ Ուրեմն, միանշանակ կարող ենք ասել, որ կուսակցական հեղինակներ ունենալու պարագայում, պլակատը ստեղծողների մէջ բացակայում են Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ներկայացուցիչները։

Գ.- Պլակատը բովանդակային առումով բաժանուած է երկու մասի։ Տեղեկատու հատուածը նշում է հայկական կոտորածների զոհերի հսկայական լինելը։ Գաղափարախօսական հատուածը ցուցում է այն փաստը, որ կոտորածների արդիւնքում Հայաստանը վեր էր ածուել որբերի երկրի[60], որին վերջնական ոչնչացումից փրկում է Խորհրդային Միութիւնը (Ռուսաստանը)։ Նկատենք, որ այս մտայնութիւնը միակն էր խորհրդային շրջանի հայ պատմագրութեան մէջ եւ գաղափարախօսական նոր կլիշէներով շարունակում էր հայութեան աւելի քան երկուհարիւրամեայ ընկալումները օտարների լծից ազատագրման հարցում Ռուսաստանի դերի շուրջ։ Վիճակն սկսեց աստիճանաբար փոխուել Ղարաբաղեան Շարժման ձեւաւորումից ի վեր, ինչի դրսեւորումներից մէկն էլ այն է, որ Հայաստանում Շարժման պատկերագրութեան մէջ բացակայում է օտարազգի փրկարարի, ազատարարի կերպարը, իսկ նման հարց ծագելու պարագայում այդ գործառոյթը վերագրւում է հենց հայ ժողովրդին։

Դ.- Ինչպէս այս, նոյնպէս եւ կառուցուածքային այս սկզբունքով ստեղծուած Ղարաբաղեան Շարժման պատկերագրութեան մէջ չեշտւում է հայերի տուած զոհերի թեման։ Այս տիպի լուծմամբ պլակատներում բնաւ առաջ չի քաշւում ազգային-ազատագրական պայքարի թեմատիկան։

Ե.- Ամենայն հաւանականութեամբ, հենց այս պլակատի տեղեկատուական եւ գաղափարախօսական լուծումները հենք ծառայեցին Շարժման նմանատիպ պատկերագրութեան առաջացման, ձեւաւորման եւ զարգացման համար։

Նկար 9

ԲԱՔՈՒ ԵՒ ՇՈՒՇԻ

Վերը դիտարկուած վերջին երկու պլակատների (նկ. 6 եւ 7) առաջին երկու բաղադրիչներին հանդիպում են «ցեղասպանութիւնների շարք»ի սկզբունքով կառուցուած բազմաթիւ ցուցապաստառներում, ինչպէս օրինակ՝ «սումգայիթը շարունակութիւնն է 1915 թ. եղեռնի, 1920 թ. Բաքուի[61] եւ Շուշիի կոտորածների» (1988 Նոյեմբերի 8) (նկ. 9) եւ «Բաքու - 1918, Շուշի - 1920, Սումգայիթ - 1988» (1988 Նոյեմբերի 18) (նկ. 10): Դրանք վերաբերւում են 1918 Սեպտեմբերին՝ թուրքական զօրքերի կողմից գաւթուելուց յետոյ՝ Բաքուում իրականացուած հայերի կոտորածներին[62] եւ 1920 Մարտին այն ժամանակների Լեռնային Ղարաբաղի կենտրոն Շուշիի հայութեան կոտորածներին:

*

Նախախորհրդային շրջանում Բաքուի ծաղկման, բարեկեցութեան գործում իր անուրանալի ներդրումն ունէր հայ համայնքը: Նա ամուր դիրքեր էր գրաւել առեւտրի եւ նաւթարդիւնաբերութեան բնագաւառներում, յուրջ առաւելութեան հասել հասարակական հաստատութիւններում՝ դումայում, դրամատներում: Միաժամանակ, հայ համայնքը աւանդաբար իր նկատելի նպաստն էր բերում մշակոյթի բնագաւառում: Մասնաւորապէս, հայ ճարտարապետները նախագծում եւ կառուցում էին բնակելի տներ, ամբողջ թաղամասեր, հիւանդանոցներ, դպրոցներ, թատրոններ եւն.[63]: 1918ին Բաքուի շուրջ 250000 բնակչութեան մօտ 88000ը կամ 35,7 տոկոսը հայեր էին:

1918ին թուրքական զօրքերը գրաւեցին Բաքուն: Երեք օր շարունակ, Սեպտեմբերի 15-17ը, քաղաքը յանձնուած էր ջարդարարների ողորմածութեանը, որի արդիւնքում «միայն անպաշտպան եւ անզէն հայ ժողովուրդը...մինչեւ վերջին շապիկը թալանուեց եւ սնանկացուեց, ենթարկուեց բռնութիւնների, ոտնահարուեցին, անարգուեցին նրա տարրական մարդկային իրաւունքները եւ ընտանեկան սրբութիւնները, գերուեցին եւ անյայտութեան մէջ կորան հազարաւոր մարդիկ: Հայերի ողբերգութիւնը չաւարտուեց կոտորածի եւ ջարդի երեք օրերով: Այդ ողբերգութիւնը անընդմէջ շարունակուեց ամբողջ երկու ամիս, քանի դեռ թուրքական հրամանատարութիւնը գտնւում էր Բաքուում»[64]: Մէկ այլ ժամանակակցի վկայմամբ, «ամէն հայկականը եւ բացառապէս հայկականը թալանուած, յափշտակուած, ոչնչացուած է:...Սանձազերծ զինուորականութիւնը եւ գազազած ամբոխը ներխուժում էին հայերի տները, սպանում էին, բռնաբարում...»[65]: Բախշի Իշխանեանի հաւաստմամբ Բաքուի Հայութեան համար կրկնուեցին բռնութեան ու հա-

լածանքի այն անօրինական պատմական էջերը որ դարեր շարունակ կրել է հայութիւնը Օսմանեան իշխանութեան սարկական լծի տակ։

Նկար 10

Տարբեր, բայց իրար շատ մօտ տուեալներ կան Բաքուի հայութեան տուած զոհերի թուաքանակի վերաբերեալ։ Այսպէս, Բաքուի Հայ Ազգային Խորհրդին կից Հարցման Յանձնաժողովի տուեալներով, ջարդերի ընթացքում սպանուել է եւ ստեղծուած մահացու պայմանների հետեւանքով մահացել 25286 մարդ, բռնութիւնների զոհ դարձել եւս 3598 մարդ (ընդհանուր առմամբ՝ 28884 մարդ կամ Բաքուի հայութեան գրեթէ 1/3ը)[66], այլ տուեալների համաձայն՝ շուրջ 20-25000[67] կամ 30000 մարդ[68]։

*

ԺԹ.-Ի. դարերում նախախորհրդային շրջանում Շուշին առեւտրի, արհեստագործութեան ու հայկական մշակոյթի խոշոր կենտրոն էր, իսկ նրա հայկական մասը իրաւամբ կրում էր «Հայոց փոքրիկ Փարիզ» անունը։

Անդրկովկասի ամենաբարեկարգ ու աշխոյժ մշակութային կեանքով ապրող քաղաքներից մէկը լինելով, Շուշին մեծամասամբ հայաբնակ էր. հայերը կազմում էին բնակչութեան 52-56%ը, թաթարները՝ 41-47%ը[69]։ 1914ի սկզբի դրութեամբ քաղաքի բնակչութեան թիւը հասել էր 42000 մարդու[70]։

1918-20 խառը ժամանակներ էին ողջ Անդրկովկասի ու նաեւ Ղարաբաղի համար[71]։ Մասնաւորապէս, Ղարաբաղի կենտրոն Շուշիում տեղաւորուած էր ադրբեջանական լաւ սպառազինուած մի զօրամաս 200-500 զինուորներով։ 1920 Մարտի 23ին, Նովրուզի[72] տօնին, հայկական փոքրաթիւ մի ջոկատ (50-60 հոգի), փորձելով առկախել ադրբեջանական սպասուելիք բռնութիւնները Շուշուայ հայութեան դէմ, յարձակում է գործում քաղաքի զօրանոցի վրայ։ Յարձակումը ձախողւում է[73]։ Զինուորները դուրս են գալիս զօրանոցից ու փոքր խմբերով սկսում են սպանել ու թալանել հայերին, ապա նաֆթով հրկիզել նրանց տները։ Քաղաքի ադրբեջանական մասի խուժանը իր հերթին մտնում է հայկական թաղերը եւ շարունակում անպատիժ աւերածութիւնները. «տղամարդկանց սպանում էին, կանանց, աղջիկներին ու երեխաներին բռնաբարում, գեղեցկուհիներին իրենց տները տանում...բոլոր նշանաւոր հայերին սպանելուց յետոյ գլուխները կտրած բազարներում պտտեցնել էին տալիս»[74]։ Այնուամենայնիւ, բնակչութեան մի մասին յաջողւում է փախչել։

Տարբեր տուեալներ կան Շուշուայ հայութեան եռօրեայ ցեղասպանութեան զոհերի թուաքանակի վերաբերեալ։ Այսպէս, որոշ աղբիւրների համաձայն, «ոչնչացուած է Շուշիի ողջ [հայազգի] բնակչութի-

ը»[75], «Շուշիի հայ բնակիչների կէսը ոչնչացաւ ամբողջ ընտանիքներով»[76], *հայազգի զոհերի թիւը կազմում է շուրջ* 6000[77], 7000[78], 8000 *մարդ*[79], «երեք օրուայ ընթացքում աւերուել եւ հրդեհուել են 7000 տներ եւ մորթուել են, - տարբեր թուեր են ասում, - ոմանք ասում են՝ երեք-չորս հազար հայեր, ուրիշները՝ աւելի քան տասներկու հազար: Իրողութիւնն այն է, որ երեսունհինգ հազար հայերից Շուշիում չի մնացել ոչ մէկը»[80]: *Իրօք, Ղարաբաղում խորհրդային կարգեր հաստատուելուց յետոյ՝* 1921*ին, Շուշին ունէր ընդամէնը* 9200 *բնակիչ, որից միայն* 3%*ն էին կազմում հայերը*[81]:

Այսպիսով, պատմագրութեան մէջ առկայ որոշ տարակարծութիւնները 1918*ի Բաքուի եւ* 1920*ի Շուշիի հայութեան կոտորածների զոհերի թուաքանակի մասին իրենց կնիքն էին թողել նաեւ ցուցապաստառների միջոցով հաղորդուող թուական տուեալների վրայ: Նոյն կերպով, սումգայիթեան ջարդերի զոհերի պաշտօնապէս յայտարարուած քանակն առաջին իսկ օրուանից բուռն քննարկումների առարկայ էր՝ յայտարարուած հայազգի* 26 *զոհերի թիւը Հայաստանում ընդունուեց որպէս արհեստականօրէն իջեցուած թուաքանակ: Այդ պատճառով էլ պլակատներում երբեմն թուաքանակի փոխարէն հարցական նշան էր դրւում: Մէկ այլ ցուցապաստառում Սումգայիթ բառը ուղեկցւում է* 26 *թուով եւ դրան յաջորդող բազմակէտով ու հարցական նշանով*[82]:

ԽՈՋԱԼՈՒ...ՆԱԽԻՋԵՒԱՆ...ՄԱՍԻՍ

Ցուցապաստառներում Խոջալուի յիշատակութիւնը պայմանաւորուած է ԼՂԻՄում՝ մայրաքաղաք Ստեփանակերտին մերձակայ ադրբեջանաբնակ Խոջալու գիւղում, գերազանցապէս հայաբնակ Ստեփանակերտում եւ մեծմասամբ ադրբեջանցիներով բնակեցուած Շուշիում 1988 *Սեպտեմբերի* 18-20*ին տեղի ունեցած բռնութիւնների ալիքով*[83]: *Առիթը խոջալուեցի ադրբեջանցիների յարձակումն էր Ստեփանակերտ հայ ուղեւորներ փոխադրող մեքենաների վրայ եւ դրան յաջորդած Ստեփանակերտի հայազգի բնակիչների մի խմբի ընդհարումը խոջալուեցիների հետ:*

Սեպտեմբերեան բախումների պատճառը, սակայն, շատ աւելի խոր հիմքեր ունէր: Բանն այն է, որ 1988 *Մարտի* 24*ի ԽՄԿԿ ԿԿի ու ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի ընդունած* «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Սոցիալ-տնտեսական Զարգացումը 1988-1995թթ. Արագացնելու Միջոցառումների Մասին» *որոշման համաձայն ԼՂԻՄին յատկացւում էր* 400 *միլիոն ռուբլի: Սակայն այդ գու-*

մարները Ադրբեջանը սկզբից եւեթ օգտագործում էր ԼՂԻՄի ադրբեջանաբնակ բնակավայրերի բարեկեցութիւնը բարելաւելու նպատակով։ Մասնաւորապէս, վիթխարի շինարարութիւն էր կատարւում ռազմավարական կարեւոր նշանակութիւն ունեցող ադրբեջանաբնակ Խոջալու գիւղում։ Նպատակը յստակ էր՝ հնարաւորութիւն ստեղծել հայկական քաղաքների շրջափակման ու ճանապարհների արգելափակման եւ, հետեւապէս, նրանց միջեւ կապը խափանելու համար[84]։ Այդ տարուայ ամռանը, ձգտելով խոչընդոտել Հայաստանի եւ ԼՂԻՄի միջեւ տնտեսական կապի աշխուժացման գործընթացը, Ադրբեջանի տարածքներով անցնող ճանապարհներին յարձակումներ սկսուեցին երթուղային աւտոբուսների վրայ։ սկսուեց «քարային պատերազմ», որը տեղափոխուեց նաեւ Ինքնավար Մարզի տարածք։ Արդիւնքում Սեպտեմբերի 18ին Խոջալու գիւղով անցնող Ասկերան-Ստեփանակերտ ճանապարհին՝ սկզբում քարկոծուեց եւ ջարդուեց գիւղատնտեսական աշխատանքներից վերադարձող ուսանողական աւտոբուսը, այնուհետեւ յաջորդեցին յարձակումներ հայ ուղեւորներով բոլոր մեքենաների վրայ։ Յարձակուողներն օգտագործում էին ոչ միայն քարեր, այլեւ հրազէն։ Յատկանշական է, որ ջարդարարութեան համար ժամանակն ամէնեւին էլ պատահական չէր ընտրուած, քանզի այդ օրը Ստեփանակերտում անց էր կացւում սգոյ հանրահաւաք Բաքուում հայերի ցեղասպանութեան եօթանասունամեակի կապակցութեամբ։ Ուշագրաւ է նաեւ այն, որ ոստիկանութիւնը միջամտեց այն ժամանակ միայն, երբ Ստեփանակերտի հանրահաւաքի մասնակիցների մի մասը օգնութեան գնաց հայրենակիցներին։ Ընդհարումների արդիւնքում զոհուեց մէկ մարդ, «25 մարդ տարբեր ծանրութեան վէրքեր ստացան, 17ը հոսպիտալացուեց»[85]։

Նոյն օրը երեկոյեան Ստեփանակերտի Կրկժան թաղամասում (որը հիմնականում ադրբեջանաբնակ էր) սկսուեցին հակահայկական բռնութիւններ։ Լուրեր հասան այն մասին, որ Շուշիի հայկական թաղամասում հրդեհի ճարակ են դառնում բնակելի տները։ Դրան հայերը պատասխանեցին հրդեհի մատնելով ադրբեջանցիների տները Ստեփանակերտում։ Այդ օրերին Շուշին լքեցին նրա վերջին հայ բնակիչները։ Դրան ի պատասխան ստեփանակերտցիներն էլ քաղաքից դուրս քշեցին ադրբեջանցիներին[86]։

Խոջալուի դէպքերը պատրուակ եղան, որ ներքին զօրքեր մտցուեն Ստեփանակերտ, այնուհետեւ յատուկ դրութիւն եւ պարետային ժամ յայտարարուի ԼՂԻՄի ողջ տարածքում։ Խոջալուեցի յանցագործների մի մասը ձերբակալուեց, սակայն միաւորամանակ անց նրանց նկատ-

մամբ յարուցուած քրէական գործերը դադարեցին։ Ադրբեջանը ցուցադրեց, որ պետական մակարդակով փաստօրէն խրախուսում է հայ բնակչութեան նկատմամբ իրականացուող բռնութիւնները։

Թէեւ Խոջալուում տեղի ունեցած իրադարձութիւնները համեմատելի չէին սումգայիթեան ջարդերի հետ, շատերն ընկալեցին այդ իրադարձութիւնները որպէս հայերի նկատմամբ վարուող ցեղասպանութեան քաղաքականութեան դրսեւորում։ Այդ մասին էր վկայում Խոջալուի ընդգրկումը «ցեղասպանութիւնների շարք»ում[87]։ Նոյնն է վկայում մէկ այլ տրանսպարանտ, որը յայտնուեց, ինչպէս եւ նախորդը, 1988 Նոյեմբերին՝ «Ցեղասպանութիւն. Բաքու, Շուշի, Նախիջեւան, Արցախ, Սումգայիթ, Մասիս, Խոջալու»։

Նկար 11

Իսկ ինչո՞վ է պայմանաւորուած Նախիջեւանի յայտնուելը «Ցեղասպանութիւնների շարք»ում։

Նախիջեւանի տարածքը Մեծ Հայքի կենտրոնական շրջաններից էր եւ դարեր շարունակ զգալի դեր էր խաղում հայ ժողովրդի պատմական,

քաղաքական, տնտեսական ու մշակութային կեանքում։ Սակայն պատերազմների ու բռնի տեղահանումների թատերաբեմ լինելը իր հետեւանքն էր ունենում տարածաշրջանի բնակչութեան էթնիկ կառուցուածքի վրայ։

Այսպէս, ԺԷ.-ԺԸ. դարերում տարածքը բնակեցւում է մահմեդական ցեղերով, հայազգի բնակչութեան մի զգալի մաս ընդունում է կաթոլիկութիւն, մի ստուար հատուած էլ՝ ստեղծուած պայմանների բերումով՝ մահմեդականանում[88]։ Արդիւնքում, Նախիջեւանի շրջանի բնակչութեան մէջ ԺԹ. դարի սկզբում հայերի տեսակարար կշիռն իջնում է մինչեւ 15-20%ի։ ԺԹ. դարի ընթացքում հայութեան թիւն աւելանում է եւ 1916ի դրութեամբ նրանք արդէն կազմում էին Նախիջեւանի գաւառի բնակչութեան 40%ը։ Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին եւ դրան յաջորդող ազգամիջեան բախումների ընթացքում հայութեան մի զգալի մասը լքում է Նախիջեւանը։ Խորհրդային կարգերի հաստատումից յետոյ Նախիջեւանի տարածքի փախստականութիւնը փորձում է վերադառնալ երկրամաս։ Սակայն Նախիջեւանի Ինքնավար Հանրապետութեան եւ Ադրբեջանի ղեկավարութեան 1922-26ի որոշումներով անյաղթահարելի արգելքներ են յարուցւում հայազգի փախստականութեան առջեւ։

Արդիւնքում, ըստ 1926ի մարդահամարի տուեալների, Նախիջեւանի տարածքի հայութեան թիւը նախայեղափոխական ժամանակաշրջանի համեմատութեամբ իջնում է գրեթէ 5 անգամ, կազմելով ընդամէնը 11300 մարդ։ Յետագայում եւս Նախիջեւանի իշխանութիւնների սոցիալ-տնտեսական, մշակութային եւ ազգային քաղաքականութիւնը նպատակաուղղուած էր Ինքնավար Հանրապետութիւնում մնացած հայութեան համար անտանելի կենսապայմանների ստեղծմանն ու տեղահանմանը։ Արդիւնքում 1970ին հայերի տեսակարար կշիռն իջաւ մինչեւ 2,9%, իսկ 1979ին՝ 1,6%ի (3400 մարդ)։ Եթէ Նախիջեւանի ԻԽՍՀ ադրբեջանական բնակչութիւնը 1926-1979ին աճեց 2,6 անգամ, ապա հայերի թիւը նուազեց 3,3 անգամ։ Նախայեղափոխական շրջանի 44 հայկական գիւղերի փոխարէն 1988ին գոյութիւն ունէին ընդամէնը 2 գիւղ[89]։ Հայ բնակչութեան դուրսմղմանն ուղղուած քաղաքականութիւնն ուղեկցւում էր հայ ժողովրդի պատմամշակութային յուշարձանների ոչնչացումով, նպատակ ունենալով վերացնել հայերի երբեմնի առկայութեան վերջին վկայութիւնները։

Նախիջեւանի օրինակը, որպէս, այսպէս կոչուած «սպիտակ ցեղասպանութեան» դրսեւորում[90], հայերի կողմից մշտապէս բերւում էր եւ

շարունակում է բերուել իբրեւ ԼՂԻՄի համար ակնյայտ, անվիճելի ապագայ այն դէպքում, եթէ նա շարունակէր գտնուել Ադրբեջանի կազմում։ Սպիտակ ցեղասպանութեանը դիմակայելու անհրաժեշտութեան գաղափարն արտացոլուած էր նաեւ 1988 Նոյեմբերի 7ի մէկ այլ ցուցապաստառում՝ «Չենք Հանդուրժի Նոր Նախիջեւան», *իսկ տաս օր անց, ի շարս սումգայիթեան դատավարութիւնը միջազգային ատեաններին յանձնելու անհրաժեշտութեան, հայալեզու եւ ռուսալեզու ցուցապաստառներով նման պահանջ էր առաջ քաշւում նաեւ նախիջեւանեան ցեղասպանութեան համար՝* «Նոր Նիւրնբերգ Սումգայիթի, Նախիջեւանի Համար», *այսինքն կարծես թէ ակնարկւում էր, որ ցեղասպանութիւնը ցեղասպանութիւն է՝ լինի այն* «կարմիր»՝ *ինչպէս որ էր Սումգայիթում, թէ* «սպիտակ»՝ *ինչպէս ժամանակին տեղի ունեցաւ Նախիջեւանում։*

*

Մասիս բնակավայրը յայտնուեց ցեղասպանութիւնների շարքում ի հետեւանս «Գարուն» կարի արտադրական միաւորման Մասիսի մասնաճիւղի 51 բանուորուհիների միաժամանակեայ թունաւորման, որն առաջացել էր շնչառական ուղիներով օրգանիզմ ներթափանցած քիմիական թունաւոր նիւթի գործողութեամբ, որին բնորոշ էին վերին շնչուղիների, նեարդային համակարգի եւ մաշկի ախտահանման կլինիկական համախտանիշեր։

Ինչպէս պարզել էր Հայաստանի եւ ԽՍՀՄ Առողջապահութեան Մինիստրութեան մասնագէտներից կազմուած բաւականին ներկայացուցչական յանձնաժողովը, «սուր թունաւորման առաջացումը կապուած է օրգանիզմի վրայ քիմիական թունաւոր նիւթի ներգործութեան հետ»[91]։ *Յանձնաժողովի աշխատանքի արդիւնքում* «արծարծուած հարցերի վերաբերեալ սպառիչ ու վերջնական եզրակացութիւններ չէին ստացուել։ Այս կապակցութեամբ նշանակուել է նոր կոմպլեքսային յանձնաժողովային փորձաքննութիւն...»[92]։

Թունաւորման գործի կապակցութեամբ յարուցուած քրէական գործը, բազմաթիւ քննչական միջոցառումները այնպէս էլ չբացայայտեցին մեղաւորներին։ Շատերի կարծիքով այս զանգուածային թունաւորումը իրականացուել էր Ֆաբրիկայում աշխատող ադրբեջանցի բանուորուհիների կողմից իրենց հայազգի գործընկերուհիների խալաթները քիմիական նիւթով մշակելու ճանապարհով, ուստի եւ այն ժամանակներում ժողովրդի մէջ լայնօրէն քննարկւում էր ցեղասպանութեան համատեքստում։ Նկատենք, որ այս առիթով ստեղծուած լարուածութեան մթնոլորտն երբեմն այնքան մեծ էր լինում, որ որոշ դէպքերում կենցա-

գային հողի վրայ տեղ գտած սովորական թունաւորումներն անգամ ընկալւում էին որպէս միտումնաւոր գործողութիւնների հետեւանք[93]։

Մասիսի դէպքերին յաջորդող մէկ տարուայ ընթացքում, Երեւանի, Եղեգնաձորի, Աշտարակի, Բուժականի, Ստեփանաւանի, Ղափանի մանուածքային մի շարք ձեռնարկութիւններում եւս, ի հետեւանս Սումգայիթից ուղարկուած գործուածքաթելի, տեղի են ունեցել զանգուածային հիւանդութիւններ յիշեցնող պատահարներ, որոնց արդիւնքում շուրջ 150 բանուորներ դիմել էին բուժօգնութեան[94]։

Նկար 12

1949-ԱԼԹԱՑ

Ցեղասպանութիւնների շարքերը կողաւորող տարեթուերի մէջ երբեմն յայտնւում է 1949 թիւը, ինչպէս օրինակ «1915 ... 1937 ... 1949 ... 1988» տրանսպարանտում, որը տանում էին դէպի Ցեղասպանութեան զոհերի յուշարձան, 1988 Ապրիլի 24ին։ Այդ տարեթիւը նոյնքան չարագոյժ է հայերի համար, որքան՝ 1937 թիւը, քանի որ 1949 Յունիսին, ըստ ոչ-պաշտօնական տուեալների, Անդրկովկասի տարածքից շուրջ

100000 հայութիւն աքսորուեց, որոնց մեծ մասը՝ Ալթայի երկրամաս[95]: Այս տրանսպարանտի թուային կոդաւորումը «վերծանուած» է համանման մէկ այլ տրանսպարանտում՝ «Դէր-Զոր, Ալթայ, Սումգայիթ...» (նկ. 11), որը դէպի յուշարձան էին տանում մէկ տարի անց նոյն օրը: Սակայն այս եւս կոդաւորում է, այս անգամ՝ տեղագրական, որի իմաստային վերծանումն առկայ է 1988ի «խորհրդային» վերջին նոյեմբերեան շքերթի ժամանակ օգտագործուած հետեւեալ տրանսպարանտում (նկ. 12).

«Պանթուրքիզմ	Դէր-էլ-Զոր
Ստալինիզմ	Ալթայ
???	Սումգայիթ»:

Այս տրանսպարանտում ցեղասպանութիւնների շարքի իւրաքանչիւր ցեղասպանութիւն բացատրւում է համապատասխան պետական գաղափարախօսութեամբ, բաց թողնելով Սումգայիթում կատարուածի պարզաբանումը:

Զնայած ստալինիզմն առաջին հայեացքից թւում է վերազգային երեւոյթ եւ նրանից տուժել է ԽՍՀՄ ողջ բնակչութիւնը, սակայն ժողովրդներին պատժելու ստալինեան պրակտիկան, երբ տեղահան էր արւում եւ աքսորւում ոչ թէ տուեալ վայրում բնակուող ժողովրդի մի մասը, այլ տուեալ ժողովուրդն ամբողջութեամբ (Ղրիմի թաթարները, թուրք-մէսխները, չեչէնները, ինգուշները, ղարաչայները, բալկարները, կալմիկները եւ այլօք[96]), խօսում է այն մասին, որ ստալինեան գենոցիդը յաճախ վերածւում է էթնոցիդի: Հենց դրան է ակնարկում տուեալ տրանսպարանտը: Արդարեւ, 1949 Յունիսի 13ի լոյս 14ի գիշերը Հայաստանում զանգուածային արտաքսումների ենթարկուեց շուրջ 13300 մարդ: Ինչպէս հետեւում է 1949 Մայիսի 29ի ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի «Վրացական, Հայկական Եւ Ադրբեջանական ՍՍՀներից, Ինչպէս Նաեւ Սեւ Ծովի Առափնեայ Տարածքներից Արտաքսուածների Տեղափոխութեան, Տարաբնակեցման Եւ Աշխատանքի Տեղաւորման Ապահովման Մասին» որոշումից (ստորագրուած Ստալինի կողմից), աքսորեալների թւում պէտք է իրօք որ զգալի լինէր հայերի թիւը, քանի որ նրանք էին համապատասխանում որոշման մէջ տեղ գտած «դաշնակցականներ», իսկ, մասնաւորապէս, յետեղեռնեան արեւմտահայ գաղթականութեան ներկայացուցիչները՝ «խորհրդային քաղաքացիութիւն ընդունած նախկին թուրքական քաղաքացիներ» բնորոշումներին: Ընդ որում, որպէս տարաբնակեցման վայր «դաշնակցականներ»ի համար նախատեսւում էր Ալթայի երկրամասը, թուրքերի եւ նախկին

թուրքահպատակների համար՝ Տոմսկի մարզը[97]։ Հետաքրքիր է, որ «1949 թ.»ը տեղագրական սկզբունքով բնորոշելու դէպքում ցուցապատառներում չէր օգտագործւում Սիբիր տեղանունը, այլ միայն Ալթայ անունը։ Թերեւս նման ընտրութիւնը պայմանաւորուած էր մի քանի գործօններով (մասնաւորապէս, թարմ էր յիշողութիւնն այն մասին, որ մէկ օրում, միաժամանակ Ալթայի երկրամաս աքսորուեցին տասնեակ հազարաւոր հայեր), որոնց թւում այն՝ որ ժողովրդի մէջ լայնօրէն տարածուած էր զրոյցն այն մասին, որ Հայրենական Մեծ Պատերազմի աւարտի մօտ, 1945 Ապրիլին, հանդիպելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղապահ Գէորգ Արքեպիսկոպոս Չէօրեքչեանի հետ, Ստալինը՝ ի պատասխան Արքեպիսկոպոսի խնդրանքի արեւմտահայ հողերի վերադարձի մասին, իբր առաջարկել է Կաթողիկոսին հայութեան համար բնակութեան նոր տարածքներ՝ հենց Ալթայի երկրամասում, որն ապագայում պէտք է դառնար հայութեան նոր հայրենիքը[98]։ Մինչդեռ Սիբիր տեղանունը շատ աւելի մեծ տարածքներ էր մատնանշում, աքսորավայր էր ծառայում Խորհրդային Միութեան «ժողովրդի թշնամի» միլիոնաւոր քաղաքացիների համար եւ որպէս այդպիսին յայտնի էր ողջ աշխարհին, ինչը չի կարելի ասել Ալթայի մասին, որը տուեալ պարագայում իբրեւ աքսորավայր էր նախատեսուած միայն հայազգի եղող դաշնակցականների համար։

Յատկանշական է, որ տրանսպարանտի առաջին երկու զոյգերը նման են ոչ միայն իրենց բնոյթով, այլեւ գտնւում են գենետիկ կապի մէջ։ Այսպէս, իմ մօր ծնողները իրենց երեխաների հետ 1949ին աքսորուել էին Թբիլիսիից (որտեղ նրանք հանգրուանել էին Վանի 1915ի գաղթից յետոյ) Տոմսկի մարզ, Սիբիր որպէս «նախկին թուրքահպատակներ» պատճառաբանութեամբ։ Նոյն բախտին էին արժանացել եւս մի քանի տասնեակ «նախկին թուրքահպատակ» հայեր, ում մերոնք հանդիպել էին թէ՛ գնացքում, թէ՛ յետագայում՝ Սիբիրում[99]։ Իսկ քանի՜-քանի՜ տասնեակների եւ հարիւրների մասին իմ ազգականները տեղեկացան միայն աքսորավայրից վերադառնալուց յետոյ։ Այսինքն ստալինեան ցեղասպանութիւնը (վրաստանեան կատարմամբ) հանդիսացաւ Թուրքիայում իրականացուած պանթուրքական էթնոցիդի անմիջական հետեւանքը։ Այս օրինակը եւս ցուցում է, որ անհիմն չի ժողովրդի մէջ առ այսօր լայն տարածում ունեցող այն համոզմունքը, որ հարեւան «եղբայրական» խորհրդային հանրապետութիւնների ղեկավարութիւնը չէր խորշում «ժողովրդի թշնամիների» վերեւից իջեցուած պլանը ինչպէս

1937ին, նոյնպէս եւ 1949ին կատարել ի հաշիւ բազմահազարանոց հայկական գաղութի ներկայացուցիչների։

Նկար 13

Վերջին տրանսպարանտում աւելի է որոշակի դրա հակախորհրդային ուղղուածութիւնը։ Բանն այն է, որ, եթէ «ցեղասպանութիւնների շարք»ի ցայժմ դիտարկուած ցուցապաստառներում դրանք կարելի էր առաջին հերթին ընկալել իբրեւ հայ-թուրքական (ադրբեջանական) «հակամարտութեան» դրսեւորում, ապա վերջին դէպքում «ձեռք է բարձրացւում» պետական գաղափարախօսութեան վրայ. չէ՞ որ «Սումգայիթ»ի կողքի հարցական նշանները տրամաբանօրէն վերծանւում են իբրեւ «վերակառուցում» կամ դրան հոմանիշ մէկ այլ տերմին։ Իսկ «վերակառուցում, հրապարակայնութիւն, դեմոկրատացում»ը ԽՍԿԿ Կկի Գլխաւոր Քարտուղար Միխայիլ Գորբաչովի հռչակած, Խորհրդային Միութեան թէ՛ Կոմունիստական Կուսակցութեան, թէ՛ պետութեան որդեգրած ներքին քաղաքականութեան հիմնական ուղենիշն էր։ Այն, որ գաղափարախօսութեան նկատմամբ նման «ոտնձգութիւնները» ոչ այլ

էին, վկայում է երեք ամիս անց, 1989 Փետրուարի 28ին յայտնուած մէկ այլ տրանսպարանտ, որտեղ 1915ի եւ 1988ի միջեւ գրուած էր «Վերակառուցում», աւելի ցածր՝ «Սումգայիթ»։

ԿԻՐՈՎԱԲԱԴ-ԳԱՆՁԱԿ, 1990

Ցեղասպանութիւնների շարքն օգտագործող ցուցապաստառներում երբեմն կարող է բացակայել 1915ի ցեղասպանութեան յիշատակութիւնը, ինչպէս օրինակ «Սումգայիթ, Մասիս, Շուշի, Խոջալու... Մինչեւ Ե՞րբ» 1988 Նոյեմբերի 7ի տրանսպարանտում (նկ. 13), որտեղ փաստօրէն չեշտուած են հայերի նկատմամբ միայն 1990ի ընթացքում տեղի ունեցած բռնութիւնների դէպքերը։

Ցիշեալ շարքը 1990 ապրիլքսանչորսեան երկլեզու յիշեցում-պլակատում հերթական լրացում ստացաւ՝ «Վան... Բիթլիս... Էրզրում... 1915 Van ... Bitlis ... Erzerum ... 75 - Մեծ Եղեռն - Սումգայիթ... Գանձակ... Բաքու... 1990 Sumgait ... Gandzak ... Baku...» (հայերէն եւ ռուսերէն) (նկ. 14)։ Այս շարքում առաջին եռեակը կազմում են Օսմանեան Թուրքիայի հայկական վիլայէթների անուանումներով խորհրդանշուող 1915ի ցեղասպանութիւնը, իսկ վերջին եռեակը՝ Ադրբեջանի այն քաղաքներն են, որոնց հայազգի բնակչութիւնը կոտորուեց եւ արտաքսուեց 1988-90ի ընթացքում։ Այնպէս, ինչպէս 1915-23ին իրականացուած հայերի ցեղասպանութիւնը պայմանականօրէն կոդաւորուում է «1915» թուականով, վերջին տարիների հայկական ջարդերը միաւորուած են ընդհանուր «1990» տարեթուով, չնայած սումգայիթեան եւ գանձակեան (կիրովաբադեան) իրադարձութիւնները տեղի էին ունեցել 1988 Փետրուարին եւ աշնանը, իսկ Բաքուի հայերի նկատմամբ բռնութիւնները տեղի էին ունեցել թէ՛ 1988 Նոյեմբերին եւ թէ՛ 1990 Յունուարին։

*

1988ի սկզբի տուեալներով Ադրբեջանի բնակչութեան քանակով երկրորդ խոշորագոյն քաղաք Կիրովաբադի շուրջ 270000 բնակիչներից աւելի քան 45000ը հայեր էին, որոնցից մօտ 32000ն էր խիտ ձեւով բնակւում հայկական թաղերում։ Հայերը քաղաքում (եւ մերձակայ գիւղերում), որն հայկական սկզբնաղբիւրներում յիշւում է Գանձակ ձեւով, բնակւում էին հնագոյն ժամանակներից եւ որոշակի դեր էին խաղում բնակավայրի առեւտրատնտեսական եւ մշակութային կեանքում նրա գոյութեան շուրջ հազար տարիների ընթացքում։ Ի. դարասկզբին հայերը բնակւում էին Քիլիսաքեանդ, ինչպէս նաեւ աւելի փոքր Նորաշէն

եւ Երեւանցոց թաղերում ու կազմում էին քաղաքի 33 հազարանոց բնակչութեան մէկ-երրորդը[100]:

Նկար 14

Զանգուածային բռնութիւնները գանձակահայութեան նկատմամբ (ինչպէս նաեւ Ադրբեջանի հայաբնակ այլ, հանրապետական ենթակայութեան քաղաքներում) սկսուեցին 1988 Նոյեմբերի 21ին[101]: *Արդէն յաջորդ օրը հայկական թաղերի բնակիչները դիմեցին ինքնապաշտպանութեան, իսկ եւս մէկ օր անց քաղաք մտան խորհրդային զօրամիաւորումներ «հասարակական կարգի պահպանութեան համար»: Նրանց նպատակներից էր՝ ինչպէս ցոյց տուեցին յետագայ իրադարձութիւնները, նպաստել հայերի բռնագաղթին՝ քաղաքից: Ինքնապաշտպանական կռիւների ընթացքում հայերը յաջողութեամբ դիմակայում էին ադրբեջանցիների յարձակումներին, որոնք ամէն անգամ նահանջում էին զոհեր տալով: Սակայն աստիճանաբար սկսւում եւ գնալով մեծ ծաւալների է հասնում (յատկապէս Դեկտեմբերի 7ի Սպիտակի աւերիչ երկրաշարժից յետոյ) բնակչութեան արտագաղթը եւ մէկ տարի անց, 1989 Նոյեմ-*

բերի կէսերին Կիրովաբադում այլեւս հայեր չկային[102]։ Բնորոշ է, որ «Յաւերժ Յիշատակ Գանձակի Անմեղ Զոհերին» գրութեամբ տրանսպարանտը մարդիկ տանում էին դէպի Ցեղասպանութեան զոհերի յուշարձան 1989 Փետրուարի 28ին, այսինքն Սումգայիթի հայութեան ցեղասպանութեան տարեդարձին, որի ճակատագիրը կիսեց Կիրովաբադի հայութիւնը 9 ամիս անց։

նկար 15

ԲԱՔՈՒ

Խորհրդային Ադրբեջանի մայրաքաղաք Բաքուի շուրջ 1,7 միլիոն բնակիչների աւելի քան 200 հազարը հայեր էին։ Բնորոշ է, որ Ղարաբաղեան Շարժման առաջին իսկ օրերից նրանց անվտանգութեան, յետագայ ճակատագրի հարցը կապւում էր ԼՂԻՄի հարցի ընթացքի հետ ոչ միայն ադրբեջանական ղեկավարութեան, այլ անգամ խորհրդային բարձրագոյն ղեկավարութեան կողմից։ Զօրի Բալայեանին եւ Սիլվա Կապուտիկեանին՝ 1988 Փետրուարի 25ի հանդիպման ժամանակ[103], Միխայիլ Գորբաչովը հարցադրել էր. «Իսկ դուք մտածե՞լ եք Բաքուում ապրող 207 հազար հայերի ճակատագրի մասին»։ Այս նշանակում է, որ սկզբից եւեթ հայերին հասկացւում էր, որ Բաքուի հայազգի բնակչութիւնը պատանդի կարգավիճակում է գտնւում եւ խորհրդային իշխանութիւնները ոչինչ չեն կարող (կամ չեն ցանկանայ) ձեռնարկել «յարաբերութիւնների սրման» դէպքում[104]։

Այդպէս էլ եղաւ։ Բաքուի հայութեան 1905 փետրուարեան, 1918 սեպտեմբերեան ջարդերին յաջորդեցին 1990ի յունուարեան կոտորածները, որոնց արդիւնքում Բաքուն իսպառ դատարկուեց հայերից։ Բաքուի

հայութեան ջարդերն իրականացուեցին Ադրբեջանի իշխանութիւնների եւ Ժողովրդական Ճակատի[105] սերտ համագործակցութեամբ։ Հայերին ծեծում էին, կողոպտում էին, թալանում էին գոյքը, բռնաբարում էին, սպանում էին հրազէնով, դանակներով, մետաղեայ ձողերով, դուրս էին շպրտում շէնքերի պատուհաններից, կենդանի թէ մեռած մարդկանց այրում էին խարոյկներում, մի խօսքով գործի էին դրուում 1915ին եւ յաջորդող ցեղասպանութիւնների մեթոդները։ Այս հանգամանքը շեշտուած է նաեւ 1990ի տեղանուանա-տարեթուային սկզբունքով ստեղծուած ապրիլքսանչորսեան մէկ այլ տրանսպարանտում՝ «Ապրիլի 24, Սումգայիթ, Բաքու. Նոյն Ցեռագիրն է» (նկ. 15), այսինքն, ժողովրդական ընկալմամբ «Բաքու» տեղանունը՝ «Սումգայիթ»ի նմանողութեամբ, եւս ստացաւ ցեղասպանութեան հոմանիշի կարգավիճակ։

Խորհրդային զօրամիաւորումները մտան Բաքու միայն այն ժամանակ, երբ վտանգի ենթարկուեց խորհրդային կարգերի գոյութիւնը։ Բաքուում հայկական կոտորածների զոհերի թիւը գերազանցում է 400ից, սակայն հայ բնակչութեան ջարդերի վերաբերեալ գործի քննութիւն այնպէս էլ չկատարուեց։ Հերթական ցեղասպանութիւնը հերթական անգամ չդատապարտուեց[106]։

*

Մէկ ուրիշ պլակատ եւս ցոյց է տալիս, որ Օսմանեան Թուրքիայի տարածքում կատարուած Ի. դարի առաջին ցեղասպանութիւնը, յառաջ բերելով ցեղասպանութիւնների շարքերով ցուցապաստառներ, 1980ականների վերջերին կարող է ընդհանրապէս չյիշատակուել։ Նման պարագայում ուշադրութիւն է հրաւիրուում գլխաւորապէս Ադրբեջանի տարածքում եւ ադրբեջանցիների ձեռքով իրականացուած ցեղասպանութիւններին, ինչպէս օրինակ, 1988 նոյեմբերեան «Ցեղասպանութիւն. Բաքու, Շուշի, Նախիջեւան, Արցախ, Սումգայիթ, Մասիս, Խոջալու» տրանսպարանտում[107]։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ղարաբաղեան Շարժման տարիներին, սումգայիթեան ջարդերից յետոյ, հայ ժողովրդի կամ նրա առանձին հատուածների, մարդկանց մեծ ու փոքր խմբերի գոյութեանը սպառնացող կամ որպէս այդպիսին ընկալուող ցանկացած վտանգ դիտուում-գնահատուում էր ցեղասպանութեան լոյսի ներքոյ։ Արդիւնքում «ցեղասպանութիւն» եզրի գործածմամբ առաջին պլան մղուեցին մի շարք հասկացութիւններ, որոնք, եթէ մինչ այդ անգա՛մ օգտագործուում էին մասնագիտական համեմատաբար

նեղ շրջանակներում, սակայն երբեք չէին ունեցել այդքան ծաւալուն ընդգրկում։ Այսպէս, Ղարաբաղեան Շարժման տարիներին «ցեղասպանութիւն» հասկացութիւնը՝ ժողովրդական ընկալմամբ, իր մէջ ներառեց «ապիտակ եղեռն» (Նախիջեւանի ու Լեռնային Ղարաբաղի հայաթափման օրինակով), «էկոլոգիական ցեղասպանութիւն», «կենսաբանական, քիմիական եղեռն» (հայկական ատոմակայանի, քիմիական հսկայ «Նայիրիտ»ի օրինակով), «մշակութային, հոգեւոր եղեռն» (հայոց լեզուի դերի նուազման, Հայաստանի սահմաններից դուրս հայկական յուշարձանների ոչնչացման օրինակով) հասկացութիւնները[108]։ Ցանձին ստալինիզմի՝ խորհրդային ամբողջատիրութեան որոշ ցայտուն դրսեւորումներ, իսկ որոշ քաղաքական ուժերի կողմից խորհրդային կարգերն ընդհանրապէս[109] դիտարկւում էին ցեղասպանութեան լոյսի ներքոյ։

Այս գործընթացը չաւարտուեց Ղարաբաղեան Շարժմամբ։

Անկախութեան կայացման ոչ-հեշտ տարիներն ուղեկցւում էին աղքատութեան աճով ու հարիւրհազարաւոր մարդկանց արտագաղթով, ինչը շատ-շատերի կողմից գրոյցներում, երբեմն եւ մամուլում, համեմատւում էր ցեղասպանութեան հետ։

Այսօր եւս այս գործընթացը շարունակւում է։ Այսպէս, 2004ի գարնանը «ապիտակ եղեռն» էր որակւում բակալաւրիատն աւարտած ուսանողներին, ասպիրանտներին, անգա՛մ երիտասարդ գիտութեան թեկնածուներին բանակային պարտադիր ծառայութիւն անցնելու օրէնքի նախագիծը («Սպիտակ Եղեռնը Սկսել Են Գիտութիւնից»)[110]։ Նոյն ոճով, «Մշակութային Եղեռն» էր որակւում Երեւանի կենտրոնում քաղաքի դիմագիծը ընորոշող նախայեղափոխական շրջանի շինութիւնների աւերումը[111] եւ՝ 2005 Ցունիսին «Հոգեւոր Եղեռն» էր դիտւում սոցիալական քարտերի համակարգի ներդրման գործընթացը («Համարակալումը Հոգեւոր Եղեռն է») եւն.։

Այսպիսով մենք տեսանք, որ Ղարաբաղեան Շարժման տարիների ցուցապաստառներում արտացոլուած է ԺԹ. դարավերջ-Ի. դարի հայերի ցեղասպանութեան, կոտորածների ու ջարդերի գրեթէ ողջ ներկայնակը, ինչը վկայում է նաեւ, որ դրանք Ի. դարավերջի հայութեան հաւաքական եւ պատմական, տրաւմատիկ երանգներ ունեցող յիշողութեան նկատելի մասն են կազմում։

ԺԹ. դարավերջ-Ի. դարասկզբի ցեղասպանութեան ու կոտորածների թեմայի նշանակալի առկայութիւնը հայոց հաւաքական եւ պատմական յիշողութեան մէջ պատճառաբանուած է նաեւ սումգայիթեան ջարդերի փաստով եւ ցուցում է հայերի նկատմամբ արիւնալի բռնութիւն-

ների շարունակականութեան, դրանց միջեւ ասես գենետիկ կապի առկայութեան գաղափարը։ Ուստի պատահական չէ, որ սումգայիթեան ոճրագործութիւնները հեշտութեամբ ընկալւում էին իբրեւ Օսմանեան կայսրութեան ժամանակներից սկսած հայերի նկատմամբ կիրառուող ցեղասպանութեան քաղաքականութեան ընդհանուր շղթայի օղակներից մէկը։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Տե՛ս, մասնաւորապէս՝ "Iconography of Gharabagh Movement: An Index of the Transformation of Armenian Identity," *Armenian Forum. A Journal of Contemporary Affairs*, volume 2, number 4, Winter 2000, էջ 39-55, նաեւ՝ «Հայ Ինքնութեան Զեւափոխման Հիմնական Ուղղութիւնները Ղարաբաղեան Շարժման Տարիներին», «Հայագիտութեան Արդի Վիճակը եւ Նրա Զարգացման Հեռանկարները» Հայագիտական Միջազգային Առաջին Համաժողով, Զեկուցումների Դրոյթներ, Երեւան, 2003, էջ 55-56, նաեւ՝ «Ցեղասպանութեան Ցիշողութիւնը Որպէս Նոր Ինքնութեան Զեւաւորիչ (1980ական Թուականների Վերջ-1990ական Թուականների Սկիզբ)», Պատմաբանասիրական Հանդէս, 2005, թիւ 1, էջ 55-66։

[2] Տե՛ս, մասնաւորապէս՝ Ցարութիւն Մարութեան, «Մենք Պէտք է Կռուենք եւ Ոչ Լաց Լինենք...»։ Անցեալի եւ Ներկայի Վերագնահատման Գործընթացը Ղարաբաղեան Շարժման Համատեքստում», Հանդէս Ամսօրեայ Հայագիտական Ուսումնասիրութեան, Վիեննա, 2003, էջ 411-468։

[3] Այն՝ երբ կոնցեպտուալ արուեստին բնորոշ միտքը պարզաբանւում է խորհրդանշական եւ անսպասելի լուծումներով։ Մանրամասն տե՛ս՝ Լ. Աբրահամեան, Ց. Մարութեան, «Քաղաքական Ելոյթների Պատկերագրական Լեզուի Շուրջ (Ղարաբաղեան Շարժման Ցուցապաստառների Օրինակով)», Հայ Արուեստին Նուիրուած Հանրապետական VIII Գիտական Կոնֆերանս։ Զեկուցումների Թեզիսներ, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատարակչութիւն, 1997, էջ 5-6։

[4] Տրանսպարանտի հեղինակները օգտագործել են «ոճիր» եւ «վճիռ» բառերի հնչողութեան մօտիկութիւնը, մի մեթոդ, որը բառախաղի, յանգաւորման եւ ակրոստիկի օգտագործման մեթոդների հետ լայնօրէն կիրառւում էր ցուցապաստառների ստեղծման գործընթացում։

[5] Տէր Զօրի մասին տե՛ս, օրինակ՝ Արամ Անտոնեան, *Մեծ Ոճիրը։ Հայկական Վերջին Կոտորածները եւ Թալէաթ Փաշա*, Պոսթըն, 1921, երրորդ գլուխ («Տէր Զօրի Զարդերը»), էջ 78-88, 109-112, նաեւ՝ *Տէր-Զօր, Հեղինակ Աղէտէն Վերապրողներ* (հաւաքեց Լեւոն Մեսրոպ), Փարիզ, տպարան Պ. Էլէկեան, 1955, էջ 228-239 («Զարդարար (Զեչէն Մահմուտ Պէկի Պատմածները»), նաեւ՝ Երուանդ Տէրենց, *Ես Տեսայ Տէր-Զօրի Դժոխքը*, Պէյրութ, տպարան Սեւան, 1966, նաեւ՝ Վերժինէ Սվազլեան, *Հայոց Ցեղասպանութիւն։ Ականատես Վերապրողների Վկայութիւններ*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատարակչութիւն, 2000։

[6] Թուրքական եւ Ֆաշիստական համակենտրոնացման ճամբարների կապին է անդրադարձել նաեւ Պարոյր Սեւակը «Եռաձայն Պատարագ» պոէմում.

Հին Չանգրրրից իր սկիզբն առաւ Բուխենվալդը նոր,
Օսվենցիմների սկիզբը դրուեց Դէր-Զօրում միայն,

Մայդանեկները Չիարէքներում հիմնադրուեցին,
Դախաուները՝ Էնկիւրիներում, Ռաքքաում, Բաբում... (Պ. Սեւակ, *Եղիցի Լոյս*, Երեւան, «Հայաստան» Հրատարակչութիւն, 1969, էջ 273, ընդգծումներն իմն են - Ց.Մ.)։

[7] «Sumgait» *ռուսերէն բառի առջեւը նկարուած էր արեան կաթիլ։ Հմմտ.՝ 1988ի մարտիութեան պլակատի հետ, որտեղ նոյնպէս պատկերուած է կոտորած, ջարդ խորհրդանշող արեան կաթիլ։ Այս եւ միւս լուսանկարների հեղինակը տողերիս գրողն է, բացառութեամբ սիրայօժար մեզ տրամադրուած թիւ 5ի (հեղինակ՝ Լեւոն Աբրահամեան) եւ թիւ 7ի (հեղինակ՝ Զաւէն Խաչիկեան)։*

[8] *Տե՛ս՝ Արմենակ Մանուկեան, Քաղաքական Բռնաճնշումները Հայաստանում 1920-53թթ., Երեւան, «Առերեսում»-Անի Հրատարակչութիւն, 1999, էջ 19։*

[9] *Ճիշտ է, հաշուարկները կատարուած են միայն հայաստանեան արխիւային նիւթի հիմամբ, քանի որ 1991ի ԽՍՀՄ փլուզումից յետոյ այդ երեւոյթի մասին փաստաթղթեր պահպանող նախկին ՊԱԿի արխիւները դարձել են անկախ հանրապետութիւնների սեփականութիւնները։ Մասնաւորապէս հայկական բազմաքանակ գաղութներ ունեցող Ռուսաստանում դրանք գտնւում են առանձին տարածքային միաւորումների մէջ, Վրաստանում՝ հրդեհի հետեւանքով այրուել են, Ադրբեջանի հետ կան յայտնի դժուարութիւններ եւն. (Մանուկեան, էջ 6)։*

[10] *Մանուկեան, էջ 20։*

[11] *Մանուկեան, էջ 25։*

[12] *Ցիշեալ քարտէզների մասին տե՛ս, նաեւ՝ Ցարութիւն Մարութեան, «Քարտէզը Որպէս Ինքնութեան Խորհրդանիշ», Հանդէս Ամսօրեայ Հայագիտական Ուսումնաթերթ, Վիեննա, 2006, էջ 454-455։*

[13] *Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի ընդունած համապատասխան որոշման մէջ սումգայիթեան իրադարձութիւնները գնահատուեցին որպէս «ոճրագործութիւններ», այլ ոչ ցեղասպանութիւն (Մոսկովսկան Հայաստան, 16 Յունիսի 1988)։*

[14] *Պլակատի մանրամասն դիտարկումը, ինչպէս նաեւ ցուցապաստառներում փոքրատառերի օգտագործման բացատրութիւնը տե՛ս՝ Ցարութիւն Մարութեան, «Հայ Պոէզիան Որպէս Ինքնութեան Պատկերագրութիւն (Ըստ Ղարաբաղեան Շարժման Ցեղասպանութեանը Նուիրուած Ցուցապաստառների)», Հայկազեան Հայագիտական Հանդէս, հատոր Ի., Պէյրութ, 2000, էջ 276-79, նաեւ՝ «Սումգայիթեան Ջարդեր. Իրողութիւն, Գնահատում եւ Պատմական Ցիշողութիւն», Հանդէս Ամսօրեայ Հայագիտական Ուսումնաթերթ, Վիեննա, 2002, էջ 182-183։*

[15] *Տե՛ս՝ Ա. Ն. Մնացականեան, Հայ Ժողովրդի Ողբերգութիւնը Ռուս եւ Համաշխարհային Հասարակական Մտքի Գնահատմամբ, Երեւան, «Հայաստան» Հրատարակչութիւն, 1965, էջ 161ին նախորդող լուսանկարը։*

[16] *Մանրամասն տե՛ս՝* "Bratskaya Pomosh Postradavshim V Turtsii Armyanam" *(Եղբայրական օգնութիւն Թուրքիոյ մէջ տուժած հայերին)* "Vvedenie, Otdel II," *Literaturno-nauchiny Sbornik, ("Ներածութիւն, Երկրորդ Բաժին," Գրականագիտական ժողովածու), Մոսկուա, Ալեքսանդրով Տպարան, 1897, նաեւ՝ Մնացականեան, Հայ Ժողովրդի Ողբերգութիւնը, էջ 26-28, նաեւ՝ Կ. Զ. Թառոյեան, Արեւմտահայերի Ազատագրական Պայքարը XIX Դարի Վերջերին եւ XX Դարի Սկզբներին, Երեւան, «Հայաստան» Հրատարակչութիւն, 1980, էջ 106-121, նաեւ՝ Զ. Կիրակոսեան, Երիտթուրքերը Պատմութեան Դատաստանի Առաջ (19-րդ դարի 90-ական թթ.-1914թ.), գիրք առաջին, Երե-*

ւան, «Հայաստան» Հրատարակչութիւն, 1982, էջ 52-63, նաեւ՝ Ս. Կ. Պողոսեան, Գոյատեւման Պայքարի Քառուղիներում (Փաստեր, Վկայութիւններ եւ Մեկնաբանութիւններ), Երեւան, «Հայաստան» Հրատարակչութիւն, 1988, էջ 214-259, նաեւ՝ Հայերի Ցեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում. Փաստաթղթերի եւ Նիւթերի Ժողովածու (կազմ.՝ Մ. Գ. Ներսիսեան, Ռ. Գ. Սահակեան. Մ. Գ. Ներսիսեանի խմբագրութեամբ), Երեւան, «Հայաստան» Հրատարակչութիւն, 1991, էջ 30-197, նաեւ՝ Ա. Ս. Համբարեան, «Վան-Վասպուրականի 1896թ. Ինքնապաշտպանական Մարտերը», Պատմաբանասիրական Հանդէս, 1997, թիւ 1, էջ 25-32։

17 Ա. Ս. Համբարեան, «Կիլիկիայի 1909թ. Հայկական Կոտորածները», Պատմաբանասիրական Հանդէս, 1988, թիւ 4, էջ 13։

18 Տե՛ս՝ Մուշեղ Եպիսկոպոս, Առանձայի Ջարդը եւ Պատասխանատուները (Նախընթաց Պարագաներ), Գահիրէ, տպարան Արարատ-Ս. Դարբինեան, 1909, էջ 9, 20-25, 29-30, 37-39, 44-47։

19 Յակոբ Յ. Թերզեան, Կիլիկիոյ Աղէտը. Ականատեսի Նկարագրութիւններ, Վաւերաթուղթեր, Պաշտօնական Տեղեկագիրներ, Թղթակցութիւններ, Վիճակագրութիւններ եւ Այլն, Կարեւոր Պատկերներով, Կ. Պոլիս, տպագր. Յ. Ասատուրեան եւ որդիք, 1912, էջ 55։

20 Հմմտ.՝ ժամանակակցի հետեւեալ դիտարկման հետ. «Հոս ծիծ ուտող երախան անգամ կրնայ այսօր ապացուցանել թէ Ատանայի կոտորածը, թալանն ու հրկիզումը վալիին գիտութեամբը եւ կարգ մը իսլամ պաշտօնեաներու եւ երեւելիներու ձեռքովը երկարօրէն պատրաստուած դժոխային բլանի մը գործադրութիւնն եղաւ» (Սուրէն Պարթեւեան, Կիլիկեան Արհաւիրքը, Կ. Պոլիս, Գրատուն Նշան-Պապիկեան,1909, էջ 38), նաեւ՝ Մուշեղ Եպիսկոպոս, էջ 51-52, 58-59, 61-63։

21 Թերզեան, էջ 110։

22 Մուշեղ Եպիսկոպոս, էջ 3։

23 Հայերի Ցեղասպանութիւնը, էջ 252-253։

24 Մանրամասն տե՛ս՝ Զապէլ Եսայեան, Աւերակներուն Մէջ, թիւ 1, Կ. Պոլիս, ՀՀԸ, 1911, նաեւ՝ Շ. Թ. Թորոսեան, Կիլիկիայի Հայերի Ազգային-ազատագրական Շարժումները 1919-1920թթ., Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1987, էջ 25-37, նաեւ՝ Ռ. Հ. Գասպարեան, «Ադանայի 1909թ. Կոտորածները», Լրաբեր Հասարակական Գիտութիւնների, 1990, թիւ 4, էջ 24-35, նաեւ՝ Հայերի Ցեղասպանութիւնը, էջ 230-266։

25 Թերզեան, էջ 278-281։

26 Համբարեան, Կիլիկիայի ..., էջ 24-25։

27 Նոյն, էջ 29։

28 Հարցի շուրջ մանրամասն տես՝ Ե. Ղ. Սարգսեան, Թուրքիան եւ Նրա Նուաճողական Քաղաքականութիւնը Անդրկովկասում, Երեւան, «Հայաստան» Հրատարակչութիւն, 1964, էջ 365-366, 372, նաեւ՝ Iz Istorii Inostrannoi Interventsii V Armenii V 1918 Godu (Dokumentei I Materialei) (Հայաստանում 1918ին օտար ինտերվենցիայի պատմութիւնից. փաստաթղթեր եւ նիւթեր), Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1970, էջ 49-114, նաեւ՝ Ա. Հ. Յարութիւնեան, Թուրքական Ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. եւ Ինքնապաշտպանական Կռիւները, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1984, էջ 112-174։

29 Սարգսեան, Թուրքիան, էջ 366-367։

[30] Յարութիւնեան, Թուրքական, էջ 163։
[31] Հայերի Յեղասպանութիւնը, էջ 638-639։
[32] Նոյն, էջ 644։
[33] Է. Ա. Զոհրաբեան, 1920թ. Թուրք-հայկական Պատերազմը եւ Տէրութիւնները, Երեւան, Ոսկան Երեւանցի Հրատարակչութիւն, 1997, էջ 167-173։
[34] Մանրամասն տե՛ս՝ Ս. Խ. Կարապետեան, 1920 թ. Հայ-թուրքական Պատերազմը եւ Սովետական Ռուսաստանը, Երեւան, «Հայաստան» Հրատարակչութիւն, 1965, էջ 31, նաեւ՝ Ե. Ղ. Սարգսեան, «Քեմալականների 1920-21թթ. Արշաւանքն Անդրկովկաս եւ 1921թ. Մարտի 16ի Մոսկովեան Պայմանագիրը», Լրաբեր Հասարակական Գիտութիւնների, 1992, թիւ 1, էջ 24, նաեւ՝ Զոհրաբեան, էջ 210։
[35] Կարապետեան, էջ 32։
[36] A. B. Kadishev, *Interventsya I Grajdanskaya Voyna V Zakavkaze* (Ինտերվենցիան եւ քաղաքացիական պատերազմը Անդրկովկասում), Մոսկուա, ՍՍՀՄ Պաշտպանութեան Նախարարութեան Ռազմական Հրատարակչութիւն, 1960, էջ 321, նաեւ՝ Սարգսեան, Քեմալականների, էջ 23։
[37] Տես՝ A. N. Khayfets, *Sovetskaya Rossiya I Sopredelniye Stranii V Godii Grajdanskoy Voyni (1918-1920)* (Սովետական Ռուսաստանը եւ սահմանակից երկրները քաղաքացիական պատերազմի տարիներին. 1918-1920), Մոսկուա, «Նաուքա» Հրատարակչութիւն, 1964, էջ 138-139, 142, նաեւ՝ Զոհրաբեան, էջ 187-193։
[38] Ամերիկացի ականատեսը վկայում է, որ Թուրքերի՝ Ալեքսանդրապոլից հեռանալուց յետոյ այցելելով Զաջուռի լեռնանցքի գագաթ, նա տեսել է շուրջ 1200-1500 դիակներ, մեծմասամբ՝ մանկանց։ Նա եզրակացրել է, որ զոհերին սպանել են հիմնականում սուիններով կամ այլ սառը զէնքով, ինչը հաստատւում է նաեւ բազմաթիւ բնորոշ վէրքերով՝ կտրուած ստինքներ, յղի կանանց ճղած որովայններ եւն.։ Ամենարնութագրականն եղել է այն, որ բացակայել են տղամարդկանց դիակները. տարիքով ամենամեծը եղել է հազիւ 14 տարեկան տղայի դի (Մ. Գ. Ներսիսեան, «Քեմալական Զօրքերի Բարբարոսութիւնները Արեւելեան Հայաստանում 1920թ. Վերջին եւ 1921թ. Սկզբներին», Պատմաբանասիրական Հանդէս, 1998, թիւ 1-2, էջ 254-55)։
[39] Մանրամասն տե՛ս՝ Սարգսեան, Թուրքիան, էջ 497-500, նաեւ՝ Կարապետեան, էջ 47-48, 50, նաեւ՝ Ա. Ալեքսանդրեան, Կարս. 1920-21, Երեւան, «Հայաստան» Հրատարակչութիւն, 1986, էջ 31-35, 45, 50-51, նաեւ՝ Զոհրաբեան, էջ 261-262, նաեւ՝ Ներսիսեան, Քեմալական, էջ 247-256։ Խորհրդահայ պատմաբան-արեւելագէտ Դ. Զաւրիեւի տուեալներով (չենուած հայաստանեան արխիւային նիւթերին), թուրքական զօրքերի կողմից 1920ին գրաւուած տարածքներում սպանուել է 60 հազար մարդ, վիրաւորուել՝ 56 հազար, սովից մահացել՝ 32 հազար, բռնաբարուել 50 հազար եւն. (D. S. Zavriyev, *K noveyshei istorii severovostochnikh vilayetov Turtsii* (Թուրքիայի հիւսիս-արեւելեան վիլայէթների նորագոյն պատմութիւն), Թբիլիսի, Թբիլիսիի Պետական Համալսարանի Հրատարակչութիւն, 1947, էջ 96)։
[40] *Sovetskaya Istoricheskaya Entsiklopediya* (Սովետական պատմական հանրագիտարան), հատոր 1, Մոսկուա, Պետական Գիտական Հրատարակչութիւն «Սովետական Էնցիկլոպեդիա», 1961, էջ 753։
[41] Այս բնակավայրի տեղադրութեան մասին առաջին տեղեկատուութեամբ պարտական եմ Յեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի նախկին գիտաշխատող, ազգագրագէտ Լուսինէ Խաչատրեանին։

[42] Մանրամասն տե՛ս՝ Մինաս Գասպարեան (Քարհատ), Հայերը Նիկոմիդիոյ Գաւառին Մէջ. Ուսումնասիրութիւն Վիճակագրական Ցուցակներով եւ Քարտէսով, Պարտիզակ, տպագր. «Ազատամարտ»ի, 1913։

[43] Մէկ այլ հեղինակ նշում է. «Քուրտպելենկ, լեռնային մեծ Հայ գիւղ մը, անառիկ դիրքով օժտուած։ Տեղւոյն Հայք, մօտ 8000, յեղափոխական, քաջ մարդիկ էին» (Ս. Մոցիկեան, Արեւմտահայ Աշխարհ, Նիւ-Եորք, տպագր. Ա. Ց. Լէյլէկեան, 1943, էջ 481)։

[44] Նոյն, էջ 44-45, 242-244։

[45] Թէոդիկ, Գողգոթա Հայ Հոգեւորականութեան եւ Իր Հօտին Աղէտալի 1915 Տարիին, Նիւ Եորք, տպ. Սր. Վարդան, 1985, էջ 375-376։

[46] Մոցիկեան, էջ 478։

[47] Ստ. Պօղոսեան, Կ. Պօղոսեան, Հայկական Հարցի եւ Հայոց Ցեղասպանութեան Պատմութիւն, Հատոր երրորդ (Տարածքային եւ Քաղաքական Կորուստներ. Քեմալիզմ), գիրք երրորդ, Երեւան, «Հայաստան» Հրատարակչութիւն, 2003, էջ 215։

[48] Գնել եպիսկոպոս Ճէրէճեան, «Հաճընի Դիւցազնական Ինքնապաշտպանութիւնը», 1915-1965, Ցուշամատեան Մեծ Եղեռնի, Պէյրութ, տպարան Ատլաս, 1965, էջ 887։

[49] Մանրամասն տե՛ս՝ Ց. Պ. Պօղոսեան, Հաճընի Ընդհանուր Պատմութիւնը եւ Շրջակայ Գօգան-Տաղի Հայ Գիւղերը, Լոս Անճելըս, Պոգոճեան տպագրութիւն, 1942, էջ 619-717, նաեւ՝ Սոկրատ Ց. Թերզեան, Հաճընի Ութամսեայ Դիւցազնամարտը (Պատկերազարդ), Աթէնք, 1937, էջ 130-392, նաեւ՝ Արամ Ասպետ, Դրուագներ Հաճնոյ Հերոսամարտէն եւ Հերոսին Ոգիականը, Պէյրութ, տպարան Տօնիկեան, 1961, էջ 75-247, նաեւ՝ Ռ. Գ. Սահակեան, Թուրք-Ֆրանսիական Յարաբերութիւնները եւ Կիլիկիան 1919-1921թթ., Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1970, էջ 166-189, նաեւ՝ Թորոսեան, էջ 177-213, նաեւ՝ Հ. Ե. Ղազարոսեան, «Հաճընի Հերոսամարտը», Լրաբեր Հասարակական Գիտութիւնների, 1990, թիւ 11, էջ 21-33։

[50] Տե՛ս՝ Ա. Խառատեան, «Հայ Գաղթականութիւնը Էգէյեանի Մերձափնեայ Շրջանում (XIV-XVIII դդ.)», Պատմաբանասիրական Հանդէս, 1988, թիւ 4, էջ 30-43։

[51] Ժթ. դարավերջին, քաղաքի 340 հազար բնակչութեան պայմաններում, հայերի թիւը կազմում էր շուրջ 11 հազար (Հ. Յակոբ Վ. Քօսեան, Հայք Ի Զմիւռնա եւ Ի Շրջակայս, հատոր Ա., Վիեննա, Մխիթարեան տպարան, 1899, էջ 43)։

[52] Մոցիկեան, էջ 207-216, նաեւ՝ Ստ. Պօղոսեան, Կ. Պօղոսեան, էջ 200-201։

[53] Ստ. Պօղոսեան, Կ. Պօղոսեան, էջ 203, 209։

[54] Տե՛ս՝ Մ. Գ. Ներսիսեան, «Մի Բանավէճ Զմիւռնիայի 1922 Թուականի Ողբերգութեան Մասին (Զմիւռնիայի Հայ եւ Յոյն Բնակչութեան Զարգերի 70ամեակի Առթիւ)», Պատմաբանասիրական Հանդէս, 1992, թիւ 2-3, էջ 89-90։

[55] Զմիւռնահայ Կեանքը Զինադադարէն Յետոյ. Ահաւոր Փլուզումը, Աթէնք, տպարան «Նոր Օր», 1924, էջ 36։

[56] Մոցիկեան, էջ 216։

[57] Ստ. Պօղոսեան, Կ. Պօղոսեան, էջ 202-203։

[58] Տե՛ս՝ Ներսիսեան, «Մի Բանավէճ», էջ 87-92, նաեւ՝ Ստ. Պօղոսեան, Կ. Պօղոսեան, էջ 212։

[59] Մինաս Ճիհանեան, «Զմիւռնոյ Աղէտը. Գրրգ-Աղաճի Հայոց Ազատումը (1922 Սեպտեմբեր)», 1915-1965 Ցուշամատեան Մեծ Եղեռնի, էջ 893։

[60] Հմմտ.՝ Հմայեակ Գրանեան, «Հայ Որբութիւնը», 1915-1965 Ցուշամատեան Մեծ Եղեռնի, էջ 926-952։

[61] Այստեղ սխալ է նշուած Բաքուում իրականացուած հայերի կոտորածի տարեթիւը. պէտք է լինի 1918, ինչպէս որ է նախորդ եւ յաջորդ ցուցապաստառներում։

[62] Յատկանշական է, որ այդ ցեղասպանութեան տարեդարձի առթիւ յայտնուեց մի պլակատ՝ «1918-1988 Սեպտ. 15 Այսօր Լրանում է Բաքուի Հայերի Արիւնոտ Ցեղասպանութեան 70 Տարին» գրութեամբ եւ անկիւնում՝ Եղեռնի զոհերի յուշարձանի ուրուանկարով։

[63] Մանրամասն տե՛ս՝ Վ. Ա. Միքայէլեան, Ս. Ս. Միրզոյեան, «Հայերի Մասնակցութիւնը Արեւելեան Անդրկովկասի Տնտեսական Կեանքում (19րդ Դարի Երկրորդ Կէսին-20րդ Դարի Առաջին Տասնամեակին)», Լրաբեր Հասարակական Գիտութիւնների, 1990, թիւ 2, էջ 74-81։

[64] Տե՛ս՝ Bakhshi Ishkhanyan, *Velikie Uzhasi V Gorode Baku. Anketnoye Issledovanie Sentyabrskikh Sobitiy 1918 Goda* (Մեծ սարսափներ Բաքու քաղաքում. 1918 թուականի սեպտեմբերեան դէպքերի անկետային ուսումնասիրութիւններ), Թիֆլիս, Բաքուի Հայկական Ազգային Խորհրդին կից Անկետային Յանձնաժողովի Հրատարակչութիւն, 1920, էջ 7։

[65] Տե՛ս՝ G. Chalkhushyan, *Krasnaya Kniga* (Կարմիր գիրքը), Թիֆլիս, 1919, էջ 153, 157։

[66] Ishkhanyan, էջ 99-100։

[67] Տե՛ս՝ A. A. Zakaryan, "Sergey Rafailovich Ob Armenii I Armyanakh" (Սերգէյ Ռաֆայելովիչը Հայաստանի եւ հայերի մասին), Լրաբեր Հասարակական Գիտութիւնների, 1990, թիւ 2, էջ 90։

[68] Տե՛ս, մասնաւորապես՝ Հայերի Ցեղասպանութիւնը, էջ 620, նաեւ՝ Chalkhushyan, էջ 153, 159, նաեւ՝ Ա. Լ. Մանուչարեան, «1918 թ. Բաքուի Հայկական Ջարդերը (ԳՅՀԻ Արտաքին Գործերի Մինիստրութեան Քաղաքական Արխիւի Փաստաթղթերը)» Լրաբեր Հասարակական Գիտութիւնների, 1990, թիւ 6, էջ 79։

[69] Վերջիններիս առկայութիւնը գլխաւորապէս պայմանաւորուած էր ի հետեւանս այն հանգամանքի, որ ԺԸ. դարի կէսերին բնակավայր էր ներթափանցել ու հաստատուել թուրքական Ջեւանշիր վաչկատուն ցեղը, որի առաջնորդ Փանահ խանը Շուշին դարձրել էր իր նստավայրը ու պարբերաբար այստեղ էր փոխադրում իր ցեղակիցներին։

[70] Տե՛ս՝ Հ. Գ. Սարգսեան, «Շուշի Քաղաքի Բնակչութեան Էթնիկ Կազմը եւ Նրա Շարժընթացը (XIXդ.-XXդ. Սկիզբ)», Հանրապետական Գիտական Նստաշրջան. 1986-1988թթ. Ազգաբանական եւ Բանագիտական Դաշտային Հետազօտութիւնների Հիմնական Արդիւնքները. Զեկուցումների Հիմնադրոյթներ, Երեւան, Հայկական ԽՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1990, էջ 56-58, հմմտ.՝ Ռ. Հ. Տէր-Գասպարեան, «Շուշու Բնակչութիւնը 18րդ Դարից Մինչեւ Մեր Օրերը», Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի Տեղեկագիր, 1963, թիւ 9, էջ 67-76, որտեղ հեղինակն այն համոզմունքն է յայտնում, որ ԺԹ. դարավերջում ֆիքսուած 33000ից Շուշուայ բնակչութիւնը մինչեւ 1920ի իրադարձութիւնները շատ չի աճել։

[71] Տե՛ս, մասնաւորապէս՝ Գ. Ա. Յովհաննիսեան, Սովետական Իշխանութեան Հաստատումը Լեռնային Ղարաբագում, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատարակչութիւն, 1971, նաեւ՝ *Nagorniy Karabakh V 1918-1923 Godakh. Sbornik Dokumentov I Materialov* (Լեռնային Ղարաբաղը 1918-1923 թուականներին. փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու), պատասխանատու խմբագիր՝ Վ. Ա. Միքայէլեան. Երեւան, Հայաստանի ԳԱ Հրատարակչութիւն, 1992, նաեւ՝ Բագրատ Ուլուբաբեան,

Արցախեան Գոյապայքարը, Ա., Երեւան, «Գիր Գրոց» Հրատարակչութիւն, 1994, մասն Ա., էջ 3-163։

[72] Մահմեդական Նոր տարուայ օրը։

[73] Լէօ, Անցեալից. Ցուչեր, Թղթեր, Դատումներ, Թիֆլիս, հրատարակութիւն «Խորհրդային Կովկաս»ի, 1925, էջ 437-439, նաեւ՝ Բագրատ Ուլուբաբեան, Արցախեան Գոյապայքար, Ա., էջ 78-79, նաեւ՝ Բակուր, Շուշի Բերդաքաղաքը (Պատմութիւնը Մինչեւ 1920թ.), Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատարակչութիւն, 2000, էջ 276-280։

[74] Տե՛ս՝ Բակուր, էջ 279-280։

[75] Տե՛ս՝ Nagorniy Karabakh, էջ 393, 395, 396։

[76] Բակուր, էջ 281։

[77] «Շուշուայ Կոտորածը», Գրական Թերթ, 11 Նոյեմբերի 1988, թիւ 46 (2314)։

[78] Լէօ, Անցեալից, էջ 438։ Հայ ականաւոր պատմաբանը 1918ից ի վեր Թիֆլիսում գործող Ղարաբաղի եւ Զանգեզուրի Հայերի Հայրենակցական Միութեան վարչութեան նախագահն էր եւ ի մօտոյ էր առնչւում Ղարաբաղում զարգացող իրադարձութիւններին։ Նշուած գրքում մէկ էջ յետոյ նա սրտի ցաւով արձանագրում է, որ «Իմ դժբախտ, սրտիս սիրելի ծննդավայրը խորովուեց բոցերի մէջ»։

[79] Տե՛ս՝ Nagorniy, էջ 416։

[80] Տե՛ս՝ Marietta Shahinyan, Sovetskoye Zakavkazye. Ocherki (Սովետական Անդրկովկասը. ակնարկներ), Երեւան, Հայպետհրատ, 1946, 254։

[81] Տե՛ս՝ Ե. Սարգսեան, էջ 57։

[82] Մէկ այլ լուսանկարչի (*) հեղինակած նմանատիպ լուսանկարը տե՛ս՝ Նպատակ, 1994, Ապրիլ, թիւ 8 (27)։

[83] Տե՛ս՝ V. B. Harutyunyan, Sobitiya V Nagornom Karabakhe: Khronika. Chast 1 (Fevral 1988 g.-Yanvar 1989 g.) (Դէպքեր Լեռնային Ղարաբաղում. ժամանակագրութիւն, մաս Ա., Փետրուար 1988-Յունուար 1989), Երեւան, 1990, Հայկական ԽՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, էջ 139-141, նաեւ՝ Լեւոն Մելիք-Շահնազարեան, Ադրբեջանի Ռազմական Յանցագործութիւնները Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Խաղաղ Բնակչութեան Դէմ, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատարակչութիւն, 1998, էջ 48-50։

[84] Իսկ դրա ուշ հնարաւորութիւնը կար, քանի որ ԼՂԻՄում աւտոմոբիլային հաղորդակցութեան բոլոր ուղիներն անց էին կացուած այն հաշուով, որ շրջկենտրոնները զուրկ լինեն ուղիղ կապից. մարզի մի շրջկենտրոնից միւսը մուտք գործելն անհնար էր առանց Ինքնավար Մարզի սահմաններից դուրս գալու, այսինքն՝ առանց ադրբեջանական տարածքներ մտնելու (Մելիք-Շահնազարեան, էջ 46)։

[85] Տե՛ս՝ «Լեռնային Ղարաբաղի Իրադարձութիւնների Շուրջ», Սովետական Հայաստան, 20 Սեպտեմբերի 1988, նաեւ՝ Վահագն Դաւթեան, «Բողոքում ենք», Սովետական Հայաստան, 21 Սեպտեմբերի 1988, նաեւ՝ Sumgait ... Genotsid ... Glasnost? (Սումգայիթ ...Ցեղասպանութիւն...վերակառուցում), կազմողներ՝ Ն. Ուլուբաբեան, Ս. Զոլեան, Ա. Արշակեան, Երեւան, Հայկական ՍՍՀ «Գիտելիք» ընկերութիւն, 1989, էջ 49։

[86] Տե՛ս՝ V. B. Harutyunyan, Sobitiya (Իրադարձութիւններ), էջ 140-141, նաեւ՝ Բագրատ Ուլուբաբեան, Արցախեան Գոյապայքարի Տարեգրութիւն, Երեւան, 1997, էջ 87։

[87] Տե՛ս՝ Harutyunyan, Sobitiya, էջ 140-141։ Այստեղ կարծիք է յայտնւում Խոջալուի դէպքերի նախօրօք կազմակերպուած լինելու մասին։

[88] Տե՛ս, մասնաւորապէս՝ Մերուժան Կարապետեան, «Հայ Կաթողիկէ Թեմը եւ էթնօդաւանական Գործընթացները Նախիջեւանում XVII-XVIII Դարերում», Հ. Սահակ Ճեմճեմեան, Նախիջեւանի Հայոց Վարժարանը եւ Հռոմը, Վենետիկ-Ս. Ղազար, Մխիթարեան Հրատարակչութիւն, 2000, էջ 6-21։

[89] Տե՛ս՝ Vladimir Khodzhabekyan, Bagrat Asatryan, "Iz Istorii Armyanskogo Naseleniya Nakhijevana," (Նախիջեւանի հայ բնակչութեան պատմութիւնից) Հրաբեր Հասարակական Գիտութիւնների, 1988, թիւ 6, էջ 26-27, նաեւ՝ Համլէտ Սարգսեան, «Նախիջեւանի Գաւառի Բնակչութեան էթնիկ կազմը եւ Շարժընթացը Վերջին 200 Տարում», Միջազգային Գիտաժողով, Նուիրուած Հր. Աճառեանի Գիտական Ժառանգութեան Հիսնամեայ Հիմնադրոյթիներ, Երեւան, 1994, էջ 54։

[90] Այս առումով տե՛ս, մասնաւորապէս՝ Yuri G. Barseghov, *Genotsid Armyan – Prestupleniye Po Mezhdunarodnomu Pravu* (Հայերի ցեղասպանութիւնը — ոճրագործութիւն՝ ըստ միջազգային իրաւունքի), Մոսկուա, «ԻԱ. դար — Համաձայնութիւն» Հրատարակչութիւն, 2000։ Այս աշխատութեան մի հատուածը (էջ 226-232) վերնագրուած է «Tseli "Belogo Genotsida" Armyan V Sovetskom Azerbaijane» (Սովետական Ադրբեջանի մէջ "Սպիտակ Ցեղասպանութեան" նպատակները), ուր անդրադարձ կայ նաեւ Նախիջեւանի ԻԽՍՀում իրականացուած «սպիտակ» ցեղասպանութեանը (էջ 226-228)։

[91] Տե՛ս՝ «Հայկական ՍՍՀ Առողջապահութեան Մինիստրութիւնում», Սովետական Հայաստան, 9 Յուլիսի 1988, նաեւ հմմտ.՝ "Masis: Lyudi Obretayut Spokoystviye" (Մասիս. մարդիկ ձեռք են բերում հանդարտութիւն), Communist, 3 Յուլիս, 1988։

[92] Տե՛ս՝ «Հաղորդում», Սովետական Հայաստան, 30 Սեպտեմբերի 1988, թիւ 237 (20558)։

[93] Հմմտ.՝ S. Oganyan, "V Masise Zharko" (Մասիսում շոգ է) *Pravda*, 16 Յուլիս 1988։

[94] Տե՛ս՝ Վլադիմիր Ամատունի, «Սումգայիթը Շարունակւում է ...», Գարուն, 1989, թիւ 6, էջ 46-47, նաեւ՝ "Spravka Po Chrezvichaynim Proisshetviyam Na Predpriyatiyakh Armyanskoy SSR, Svyazannikh S Massovimi Zabolevaniyami Rabochikh" (Տեղեկանք Հայկական ՍՍՀ ձեռնարկութիւններում արտակարգ պատահարների վերաբերեալ, կապուած աշխատաւորների զանգուածային հիւանդութիւնների հետ) (անտիպ)։

[95] Ղարաբաղեան շարժման տարիներին 1949ի աքսորի անդրադարձի մասին տե՛ս, օրինակ՝ Սերօ Խանզադեան, «Արիւնոտ Վարագոյրը Դեռ Չի Պատռուել», Գրական Թերթ, 17 Փետրուարի 1989, թիւ 8 (2328), նաեւ՝ Անտոն Քոչինեան, «Հայրենիքի Փշալարի Մէջ», Գարուն, 1989, թիւ 3, էջ 49-50, նաեւ՝ Ռուբէն Քամալեան, «Աքսորի՝ Տարբերակը», Գրական Թերթ, 16 Յունիսի 1989, թիւ 25 (2345), որտեղ հեղինակը 1949ի զանգուածային տեղահանութիւն-աքսորը համեմատում է ցեղասպանութեան հետ, նշելով, որ այն իրականացուել է ցեղասպանութեան կանխման եւ դրա համար պատժի մասին կոնվենցիայի ընդունումից կէս տարի անց եւ Խորհրդային Միութեան այդ կոնվենցիային միանալուց կէս տարի առաջ, նաեւ հմմտ.՝ Գրիգոր Յարութիւնեան, Կեանքը եւ Գործունէութիւնը (կազմողներ՝ Ն. Միկոյեան, Հ. Աւետիսեան), Երեւան, ՀՀ ԳԱԱ Հրատարակչութիւն, 2000, էջ 10-12, 125։

[96] Ուսումնասիրութիւնների համաձայն, 1943ին զանգուածային աքսորի են ենթարկուել աւելի քան 93000 կալմիկներ եւ 68000 ղարաչայներ, 1944ին՝ մօտ կէս միլիոն չեչէններ եւ ինգուշներ, 37000 բալկարներ, 183000 Ղրիմի թաթարներ եւն. (Մանուկեան, էջ 218-219)։

[97] Տե՛ս՝ Մանուկեան, էջ 229-231։

[98] Այս հանդիպման մանրամասների շուրջ ժողովրդի մէջ շրջում էին զանազան, արդէն ժողովրդական երանգ ստացած տարբերակներ (Ստեփան Ստեփանեանց, Հայ Առաքելական Եկեղեցին Ստալինեան Բռնապետութեան Օրօք, Երեւան, «Ապոլոն» Հրատարակչութիւն, 1993 (1994), էջ 163):

[99] Մանրամասն տե՛ս՝ A. Aleksanyan, "Dnevniki: 1949-1954" (Օրագրեր· 1949-1954), Սիրիր (անտիպ, 440 էջ):

[100] Աւելի մանրամասն տե՛ս՝ Ե· Լալայեան, «Գանձակի Գաւառ· Նիւթեր Ապագայ Ուսումնասիրութեան Համար», Ազգագրական Հանդէս, Ե· գիրք, 1899, թիւ 1, էջ 213-353:

[101] Կիրովաբադի հայաբնակ թաղամասը ադրբեջանցի շուրջ հազարանոց ամբոխի առաջին յարձակմանը ենթարկուել էր դեռեւս 1988 Փետրուարի 28ին (Levon Melik-Shahnazaryan, *Gandzak: Neutraechenniy Mir (Vospominaniya Ochevidtsa)* (Գանձակ· անմիջիաբ աչխարհ (ականատեսի յուշերը), Ստեփանակերտ, 1996, էջ 12, նաեւ՝ Ս· Կապուտիկեան, Էջեր Փակ Գզրոցներից, Երեւան, «Ապոլոն» Հրատարակչութիւն, 1997, էջ 334):

[102] Մանրամասն տե՛ս՝ Melik-Shahnazaryan, *Gandzak* ..., էջ 63:

[103] Հանդիպման ընթացքի մասին մանրամասն տես՝ Կապուտիկեան, էջ 275-293, նաեւ՝ Ուլուբաբեան, Արցախեան Գոյապայքարի, էջ 30-32:

[104] Տե՛ս՝ Ուլուբաբեան, Արցախեան Գոյապայքարի, էջ 30, նաեւ՝ Զօրի Բալայեան, «Միայն Զյատուցուած Զարագործութիւնն է Զարիք Մնում», Ազգ, 27 Փետրուարի 1998, թիւ 33 (1536): Իր այս լրագրային յօդուածում Բալայեանը շարունակում է· «Ես մտածեցի, որ աշխատասենեակի տէրը բնաւ պատահաբար չէ, որ նշեց ոչ թէ ինչ-որ կլոր թիւ, ասենք, 200 հազար, այլ հենց 207 հազար: ...Անկասկած, Բաքուից ստացուած զեկուցագրերում, ի թիւս այլ բաների, ընդգծուել էր նաեւ այն ահաբեկիչ միտքը, որ Ադրբեջանի մայրաքաղաքում բնակւում է 207 հազար հայ, որոնց կը մորթեն ադրբեջանցիները»: Բաքուի հայութեանը սպասուելիք ճակատագրի մասին բաւականին թափանցիկ ակնարկներ կան նաեւ Գորբաչովի 1988 Յուլիսի 18ի ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստի ժամանակ Հայաստանի Գրողների Միութեան նախագահ Վարդգէս Պետրոսեանի ունեցած ելոյթի առթիւ տեղ գտած բանավէճում ("Zasedaniye Prezidiuma Verkhovnogo Soveta SSSR" (ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան Նիստը), *Izvestiya*, 20 Յուլիս 1988, էջ 4:

[105] Ադրբեջանում ծաւալուած ժողովրդական շարժումը ղեկավարող մարմինը, որ Հայաստանի ու ԼՂԻՄի Ղարաբաղեան Շարժմանը հակադրուելուց զատ առաջ էր քաշում նաեւ այդ տարիների ԽՍՀՄում ծաւալուած ազգային-դեմոկրատական շարժումներին բնորոշ պահանջներ:

[106] Բաքուի հայութեան 1990ի կոտորածների մասին տե՛ս՝ Մոսեսովա, Ա· Յումնանեան, Բաքուի Զարդերը· Պաշտօնական Փաստաթղթեր, Ականատեսների Վկայութիւններ եւ Այլ Նիւթեր 1990 թ· Յունուարի 13-19ի Ողբերգական Իրադարձութիւնների Վերաբերեալ՝ Անհրաժեշտ Մեկնաբանութիւններով, Երեւան, «Նարեկացի» Հրատարակչութիւն, 1992, նաեւ՝ Ուլուբաբեան, Արցախեան Գոյապայքարի, էջ 139-147, համա՝ L. H. Abramian, H. T. Marutyan, H. L. Petrosyan, Z. V. Kharatyan, "Misli Po Povodu Situatsii V Azerbaijane I Armenii (Yanvar 1990 g.)" (Մտքեր՝ Ադրբեջանի եւ Հայաստանի իրադրութեան առիթով (Յունուար 1990), *Literaturnaya Armenia*, 1990, N 4, էջ 106-108:

[107] *Հմմտ.՝* «Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարեանը 1988 թուականին Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում ոճրագործութեան զոհերի յիշատակի կապակցութեամբ այսօր ուղերձ է յղել, որում ասում է, որ այդ իրադարձութիւններն իրենց վայրագութեամբ ցնցեցին միջազգային հանրութիւնը: «Միւս կողմից արժանացան խորհրդային իշխանութիւնների ուշացած եւ ոչ համարժէք արձագանգին: Դրանք նաեւ դարձան սկիզբ *Արցախի, Գարդմանքի, Գանձակի եւ Բաքուի* խաղաղ հայ բնակչութեան դէմ ուղղուած բռնութիւնների նոր ալիքների,- *ասուած է ուղերձում:*- Ըստ Նախագահի՝ ազգային պատկանելութեան սկզբունքով իրականացուած սպանութիւնների եւ տեղահանութիւնների շղթան, որի ականատեսն են եղել շատ-շատերը, «*ցեղասպանութիւն է» (ընդգծումներն իմն են - Ց.Մ.)», Երկիր*, 27 *Փետրուարի* 2005:

[108] *Մանրամասն տե՛ս՝ Ց. Մարութեան, «Տէր-Զօր ... Սումգայիթ ... Աւռմակայան ... Նախիջեւան»- «Ցեղասպանութիւն» Հասկացութեան Սահմանների Ընդլայնումը Ղարաբաղեան Շարժման Տարիներին (1988-1990 թթ.)», Նոր Ազգագրական Հանդէս. Գիտական Աշխատութիւններ*, 2005, *թիւ Ա.*, *էջ* 78-88:

[109] *Մանրամասն տե՛ս՝ Ց. Մարութեան, «Մենք Պէտք է Կռուենք»*, *էջ* 416-423, 433-434:

[110] *«Դասագուլը Շարունակւում է»*, *Հայկական Ժամանակ*, 21 *Փետրուարի* 2004, *նաեւ՝* Tamara Ovnatanyan, "Nauku Zabirayut V Armiyu" (*Գիտութեանը տանում են բանակ*), *Novoye Vremya*, 24 *Փետրուար* 2005: *Բնութագրական է, որ նման որակումներ գործածւում են նաեւ սփիւռքահայ ուսանողների կողմից: Այսպէս, Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան փակման պլանների առիթով բարձրացած բողոքի ալիքի ժամանակ, Նիկոսիայում անցկացուած հերթական ցոյցերից մէկին, ի թիւս այլ ցուցապաստառների, կար նաեւ հետեւեալը:* "This is a second genocide" ("Community Outraged as AGBU Announces Closure of Melkonian School in Cyprus", *The Armenian Weekly*, March 27, 2004 (Volume 70, Number 13).

[111] *Ց. Մարութեան, «Մշակութային Եղեռն, Որն Ընթանում է Մեր Աչքի Առջեւ», Ազգ*, 26 *Փետրուարի* 2005:

GENOCIDE SERIES: HISTORICAL MEMORY AND IDENTITY AS REFLECTED IN THE DATES AND PLACES OF THE PLACARDS RAISED DURING THE KARABAGH VIGILS

(summary)

HARUTYUN MARUTYAN

The author argues that the current mindset of the Armenians in most of Armenia was formed during the two and a half year period of the Karabagh Movement (1988-1990). Indeed, the Karabagh movement brought big changes to the Armenian mindset that had been formed during the seven decades of Soviet rule and to national Armenian identity.

It has been established that the theme of the genocide of the Armenians, that is the early twentieth century Armenian genocide as well as new massacres and pogroms that took place in the late 20th century, persisted as the most important expression of Armenian historic and collective memory during the Karabagh movement years. However, the expression of the theme underwent changes including the fact that the symbol of the victim that called for justice and sympathy was replaced by the fighter. Indeed, a new perception developed according to which the attainment of national goals can be achieved only through struggle. After these general observations the author analyses and decodes the dates and places that were used on the placards during the Karabagh movement vigils, the symbolism they represented and the concepts they bore.

Marutyan notes that both dates and names of places were used as keywords in order to fully express and convey the corresponding message and information. In this regard, the author states that the genocide theme was given first place after the Sumgait pogroms of February 1988, which were identified unequivocally with the 1915 massacres.

Thus, 1988 was put next to 1915 and the name of Sumgait next to Deir Zor, alongside the names of the other non-Armenian concentration camps of Bukhenwalt and Auswich.

If Deir Zor had become synonymous with the Armenian genocide perpetrated by the Turks, Sumgait became synonymous with the late 20th century pogroms committed by the Azerbaijani Turks.

Marutyan analyzed fifteen placards that he called Genocide series placards. These depicted dates with generic messages intertwined with place names as further elaboration of the message transmitted.

Marutyan notes that certain dates went beyond a particular massacre and symbolized a whole series of killings and massacres.

In this regard, Marutyan highlights a number of dates and places with broader values, like Deir Zor, Bekhenvalt, Sumgait, Shushi, Baku, Khodjalu, Izmir, Hajun, Kunjular, Alexandropole, Cilicia, 1915, 1895, 1909, 1918, 1919, 1920, 1921, 1922, 1937, and 1988. Some of these dates and places were registered on the placards with numbers or figures or maps, providing further elucidation to the reader. In certain cases a triad of date, place and number has been depicted.

The author underlines the fact that in the post-Sumgait era, any danger that threatened the existence of any Armenian group, or any danger that the Armenians faced, was seen and perceived in the light of genocide. This meant a wider usage of the word genocide than was technically correct. For instance, certain environmental, social, or cultural conditions were dubbed as ecological genocide, biological and chemical genocide, cultural and spiritual genocide, etc.